26 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2013 ՀԻՆԳՇԱԲԹԻ 162(5245)

Ազգ Azg

ISSN: 1829-1651

# Ռոուհանին դատապարտեց թե՛ Հոլոքոսթը եւ թե՛ Իսրայելի ստեղծման եղանակը

## *Օբամայի հետ նրա հանդիպումը չկայացավ*

Ամերիկյան CNN հեռուստաալիքին տված հարցազրույցում Իրանի նախագահ Հասան Ռոուհանին հայտարարել է, որ Հոլոքոսթը՝ հրեաների ողջակիզումը, որպես նացիստների կատարած հանցագործություն, «արժանի է պարսավանքի եւ դատապարտման»:



«Ես պատմաբան չեմ, բայց կարող եմ ասել, որ մարդկության դեմ ուղղված ամեն մի հանցագործություն, այդ թվում՝ հրեաների եւ ոչ հրեաների դեմ նացիստների կատարածը, արժանի է պարսավանքի», հայտարարել է Ռոուհանին՝ ի պատասխան իրանյան ծագումով հայտնի լրագրողուհի Քրիստիան Ամանպուրի այն հավաստման, որ Իրանի նախկին նախագահ Մահմուդ Ահմադինեժադը քանիցս «առասպել» է անվանել Հոլոքոսթը:

Միեւնույն ժամանակ Ռոուհանին ընդգծել է, որ նմանօրինակ պատմական իրադարձությունները այս կամ այն ազգին իրավունք չեն տալիս զավթելու ուրիշի հողերը եւ այնտեղից դուրս մղելու մարդկանց:

«Ֆիգարո» թերթի կայքէջը այս կապակցությամբ նշում է, որ անցյալ շաբաթ մեկ ուրիշ հեռուստազրույցի ժամանակ Ռոուհանին խուսափել էր ուղղակիորեն պատասխանել Հոլոքոսթի հետ կապված հարցին: Այս անգամ նա դատապարտել է ոչ միայն հրեաների ողջակիզումը, այլեւ Իսրայելի պետության ստեղծումը ի հաշիվ «մեկ ուրիշ բնակչության»:

«Կյանքից զրկելը նողկալի բան է: Տարբերություն չկա՝ հրեայի կյանք է, քրիստոնյայի, թե մահմեդականի: Մեզ համար դա միեւնույն բանն է: Սակայն դա որեւէ մեկին թույլ չի տալիս ասել՝ քանի որ նացիստները ոճիր գործեցին մարդկանց մի խմբի դեմ, ուրեմն հիմնավորված են մեկ ուրիշ խմբի հողի բռնատիրումն ու օկուպացումը», ասել է Ռոուհանին CNN-ի լրագրողուհուն:

Ինչ վերաբերում է ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովում սեպտեմբերի 24-ին Իրանի նախագահի ունեցած ելույթին, Իսրայելի պատվիրակությունը բոյկոտել էր այն: Վարչապետ Բենիամին Նաթանյահուի անձնական կայքէջը հաղորդում է բառացիորեն հետեւյալը. «Վարչապետ Նաթանյահուն ՄԱԿ-ում Իսրայելի պատվիրակությանը հրամայեց վարվել անցյալ տարվա պես եւ ներկա չլինել Իրանի նախագահի ելույթին: Չնայած նոր նախագահի հմայքին, Իսրայելի նկատմամբ Թեհրանի վարչակարգի քաղաքականությունը չի փոխվել»:

ՄԱԿ-ում Ռոուհանին հայտարարել է, որ ինքը չի ձգտում սրել Իրանի հարաբերությունները ուրիշ երկրների հետ: Նա նշել էր, որ պատրաստ է անհապաղ բանակցություն սկսել իր երկրի միջուկային ծրագրի վերաբերյալ, ընդգծելով, որ վերջինս խաղաղ բնույթ է կրում: Բացի դրանից, Ռոուհանին հայտարարել էր, որ Իրանի դեմ ուղղված միջազգային պատժամիջոցները չափազանց «կոպիտ» են, եւ որ դրանցից տուժում են ոչ թե «քաղաքական գործիչները», այլ «հասարակ մարդիկ»:

Լրատվամիջոցներին նա նաեւ հայտնի է դարձրել, որ ՄԱԿ-ում Իրանի պատվիրակությունը հրաժարվել է կազմակերպել Ռոուհանիի հանդիպումը ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբամայի հետ: Նման հանդիպում անցկացնելու նախաձեռնությամբ ավելի վաղ հանդես էր եկել ամերիկյան կողմը:

**Պ. Ք.**

# Ի՞նչ խնդիր է լուծելու միասնական քննչական մարմինը



ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ճիշտ դուրս եկան այն լուրերը (այդ թվում՝ «Ազգի»), որ Հայաստանի նախագահը մի նոր ուժային կառույց՝ միասնական քննչական մարմին է ստեղծում, դրա գլխավորումը հանձնելով նախկին գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանին: Մի կողմից՝ Հովսեփյանի կուտակած փորձն ու անձերի, իշխանության, ընդդիմության, տնտեսական եւ քաղաքական միավորների վերաբերյալ տիրապետած ահռելի տեղեկատվությունը չեն կորչի՝ մեկ մարդ գիտե եւ կարող է ի տեղի եւ ժամանակի օգտագործել այն ահռելի բազան, ինչի չնչին մասը տասնյակ մարդիկ պետք է ժամանակ, նյարդեր եւ ռեսուրսներ ծախսելով իմանան աշխատանքն ի կատար ածելիս:

Տես էջ 2

# 15 մլն եւ 40 մլն եվրոյի բյուջետային երաշխիքներ ԿԲ-ին

Հայաստանի Հանրապետության կառավարությունն այսօր 15 մլն եվրոյի համարժեք դրամի չափով բյուջետային երաշխիք կտրամադրի ՀՀ Կենտրոնական բանկին՝ գերմանական KfW բանկի եւ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի միջեւ՝ 2012-ի հունիսի 11-ին կնքված «Հայաստանի գյուղատնտեսության ոլորտի աջակցման» ծրագրի շրջանակներում նույն գումարի չափով վարկ տրամադրելու մասին պայմանագրով նախատեսված վարկային պարտավորությունների ապահովման նպատակով:

KfW-ի եւ ՀՀ Կենտրոնական բանկի միջեւ 2012թ. նոյեմբերի 13-ին կնքված «Վերականգնող էներգիայի աջակցություն» (երրորդ փուլ) ծրագրի շրջանակներում 40 մլն եվրոյի համարժեք դրամի չափով վարկ տրամադրելու մասին պայմանագրով նախատեսված վարկային պարտավորությունների ապահովման նպատակով էլ կառավարությունը Կենտրոնական բանկին կտրամադրի նաեւ 40 մլն եվրոյի չափով բյուջետային երաշխիք:

**Ա. Մ.**

# Աճուրդի հանված ամենաթանկ ադամանդը

Sotheby's-ն այս տարվա նոյեմբերին Ժնեւում կվաճառի երբեւիցե աճուրդի հանված ամենաթանկ ադամանդը: Այդ մասին, ինչպես տեղեկացնում է «Արմենպրես»-ը, ասված է աճուրդի տան հաղորդագրության մեջ:

«Վարդագույն աստղ» (Pink Star) թանկարժեք քարը՝ ձվաձեւ երեսակման եւ 59,6 կարատ քաշով անբասիր վարդագույն ադամանդը, մասնագետները գնահատել են ավելի քան 60 միլիոն դոլար:

«Վարդագույն աստղը» չափերով ավելի քան երկու անգամ գերազանցում է մեկ այլ վարդագույն ադամանդի՝ Graff Pink-ին, որը 2010 թվականի նոյեմբերին 45,75 միլիոն դոլարով վաճառվել է Ժնեւի աճուրդում, ընդ որում՝ նախապես գնահատվել էր 27-38 միլիոն դոլար:

# Հրդեհ «Գրանդ Քենդի»-ի տարածքում. տուժածներ չկան




**ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն սեպտեմբերի 25-ին՝ ժամը 06.57-ին, ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւանի Մասիսի փողոցի թիվ 31 հասցեում գտնվող «Գրանդ Քենդի» ՓԲԸ-ի տարածքում: Ինչպես հաղորդում է «Արմենպրես»-ը՝ վկայակոչելով ԱԻՆ կայքէջը, դեպքի վայր են մեկնել 6 մարտական հաշվարկ եւ ՃԿԿ օպերատիվ խմբերը, որոնց ավելի ուշ միացել է եւս 6 հաշվարկ, որոնք իրականացրել են հրդեհաշիջման աշխատանքները:**

**Ըստ նախնական տվյալների՝ հրդեհը բռնկվել է երկհարկանի շենքի առաջին հարկի ստվարաթղթի արտադրամասում (մոտ 650 քմ):**

**Ընկերությունից տեղեկացրել են, որ տուժածներ չկան: Դեռեւս հստակեցված չեն հրդեհի բռնկման պատճառներն ու հասցված վնասի չափերը:**

# Կրկնակի խաբված Ալիֆրամ Հումմաթովը

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Լրատվամիջոցները հայտնում են, որ Արցախ կայցելի «Թալիշ-Մուղանական հանրապետության» վտարանդի առաջնորդ Ալիֆրամ Հումմաթովը: Երկու օր Հումմաթովը Երեւանում էր: Նա ներկա է գտնվել ԵՊՀ-ում թալիշագիտության կենտրոնի բացմանը, հանդես եկել դասախոսությամբ:

Ադրբեջանական մամուլը Հումմաթովին արդեն իսկ համեմատել է «գեներալ Վլասովի» հետ: Խոսքը խորհրդային գեներալի մասին է, որը Հայրենական մեծ պատերազմի տարիներին գերվել էր ֆաշիստներից, համագործակցել Գերմանիայի իշխանությունների հետ եւ ստեղծել «Ռուսաստանի ազատագրական բանակն» ու կռվել խորհրդային զորքերի դեմ:

Համեմատությունն, ինչպես տեսնում ենք, լիովին անտեղի է. Հումմաթովը ղարաբաղյան պատերազմում հայկական կողմին գերի չի հանձնվել: Ընդհակառակը, ամենատարբեր աղբյուրների վկայությամբ, նրա հրամանատարությամբ գործող «թալիշական կորպուսն» ադրբեջանական բանակի ամենամարտունակ ստորաբաժանումն էր, որը, կախված իրավիճակից, ռազմաճակատի այս կամ այն ուղղություն էր տեղափոխվում:

Ադրբեջանում Հումմաթովի անունը հայտնի է դարձել 1990-ի տարեսկզբին, երբ նրա գլխավորությամբ Լենքորանում տապալվել է խորհրդային իշխանությունը, ավերվել Իրանի հետ պետական սահմանը: Մինչ այդ Հումմաթովը գլխավորել է Ադրբեջանի ժողովրդական ճակատի Լենքորանի կառույցը, փաստացի հանդես եկել որպես ընդդիմության «լիազոր ներկայացուցիչ հանրապետության հարավային տեղաշրջանում»:

Հումմաթովը լուրջ մասնակցություն է ունեցել Ադրբեջանի զինված ուժերի ձեւավորմանը: Մի շարք աղբյուրներ մատնանշում են, որ նրա գլխավորած զինյալները 1992-ի ամռանը կարողացել են «խոչընդոտել, որ հեռացող նախկին խորհրդային զորքերը չփչացնեն զինտեխնիկան եւ ռազմամթերքը»: Նույն տարում նա նշանակվել է Ադրբեջանի պաշտպանության նախարարի մարտական պատրաստության գծով տեղակալ:

Տես էջ 5

ԱՆԴՐԱԴԱՐՁ

# Ի՞նչ խնդիր է լուծելու միասնական քննչական մարմինը

*1-ին էջից*

Մյուս կողմից՝ այդ տեղեկատվությունը համակարգային առումով կարող է օգտագործվել տարբեր նպատակներով, նայած ի՞նչն է դրված այսպիսի վերակազմավորման հիմքում:

Ուշադիր կարդալով միասնական քննչական մարմին կազմավորելու նախագահ Սարգսյանի երեկ հրապարակված հրամանագիրը՝ մի շարք տողատակեր կարելի է նկատել: Փաստորեն նախագահ Սարգսյանը տարբեր կառույցներում առկա քննչական մարմինները միավորում է մեկ կառույցի մեջ՝ քննչական մարմինների անկախությունն ամրապնդելու, քրեական գործերով նախաքննության արդյունավետությունը բարձրացնելու համար: Այլ խոսքով՝ պաշտպանության նախարարության, ոստիկանության, Պետեկամուտների կոմիտեի քննչական մարմինները, որտեղից գործերը դատարան գնում կամ չեն գնում, այլեւ սեպարատ խաղեր պետք է չտան, գործեր չկոծկեն, կամ հակառակը՝ գերատեսչական շահով չառաջնորդվեն գործ քննելիս:

Այդպե՞ս հասկանանք: Կամ միգուցե շահերը համակարգելու խնդիր կա՞: Ո՞րն է նոր գերկառույցի ստեղծման նպատակը:

Ավելի հասկանալի դարձնենք մեր խոսքը՝ միգուցե այս կենտրոնացումից նվազե՞ն զորամասերում տարբեր հանգամանքներում մահացած զինվորների «ինքնասպանություն» որակումները կամ ավելանան այնպիսի գործեր, ինչպիսին երիտասարդ իրավաբան Սերգեյ Գրիգորյանինն է, ով Պետեկամուտների կոմիտեի դեմ հայցով վիճարկել է իր ներկրած մեքենայի մաքսազերծման բարձր, ոչ իրական վճարը եւ Վերաքննիչ դատարանով հայցի բավարարում ստացել՝ երկու հազար դոլարով պակաս մաքսազերծման իր իրավունքը պաշտպանելով: Կամ մեր մանր ու միջին բիզնեսի ներկայացուցիչները այսուհետեւ ռիսկ կանեն գուցե վիճարկել իրենց վզին փաթաթվող այն հարկերը, որոնք նրանց անարդարացի եւ չհիմնավորված են թվում: Կամ ոստիկանությունից առանց ապացուցողական հիմքերի ոչ մի գործ այլեւս չի՞ հայտնվի դատարանում, այլ խոսքով՝ այլեւս կհրաժարվեն «գործ սարքելու» դեռեւս հանդիպող պրակտիկայից:

Շարունակելով ընթերցել նախագահ Սարգսյանի հրամանագիրը՝ նշենք, որ ստեղծվելիք մարմինը ապահովվում է իրավական եւ օրենսդրական հիմքով. միասնական քննչական մարմնի կազմավորման իրավական ապահովման հանձնաժողովի կազմը հաստատելուց հետո վերջինս պետք է մշակի եւ նախագահի աշխատակազմ ներկայացնի քննչական մարմնի կազմավորման եւ գործունեության համար անհրաժեշտ օրենքների նախագծերը, իսկ մինչեւ վերջիններիս գործողության մեջ մտնելը կառավարությունը համապատասխան իրավական ակտերի նախագծեր պետք է մշակի՝ միասնական քննչական մարմնի կազմավորման եւ գործունեության ֆինանսական, շենքային եւ նյութատեխնիկական ապահովման նպատակով: Հետաքրքական է նաեւ քննչական մարմնի կազմավորման իրավական ապահովման՝ նախագահի հրամանագրում ներկայացված հավելվածով առանձնացված կազմը. հանձնաժողովի նախագահ՝ Աղվան Հովսեփյան, անդամներ՝ Արամ Թամազյան, Գեորգի Կուտոյան, Գրիգոր Մուրադյան, Պավել Սաֆարյան, Արա Նազարյան, Տիգրան Բարսեղյան, Գագիկ Համբարձումյան, Վարդան Եղիազարյան եւ այլք:

Նախագահը փաստորեն ստեղծում է Հետաքննությունների դաշնային բյուրոյի պես մի բան, այդպիսի կառույց ունեն ԱՄՆ-ը, Ռուսաստանը, եւ կարելի է ասել, որ այս երկու երկրներում էլ այդ կառույցները բավական ազդեցիկ են: ԱՄՆ-ում այդ կառույցը բավական անկախ է նախագահից, թեեւ չի կարելի պնդել, որ կոռումպացված չէ, իսկ Ռուսաստանում համանման կառույցը հաճախ է ուղղորդվում անցանկալի գործարարների դեմ: Ինչի՞ համար է ստեղծվում մերը, արդյո՞ք դեր է ունեցել տարբեր համակարգերում գործող քննչական կառույցների կախվածությունը տվյալ գերատեսչությունների ղեկավարներից իսկապես, այդպիսով սնելով այդ կառույցների հանդեպ անվստահությունը հանրության մեջ, թե՞ այս պահին ազդեցությունների գերկենտրոնացած եւ երկրի նախագահին ավելի հաշվետու կառույցի խնդիր է լուծվում, կանխելու համար ամեն տեսակ, այդ թվում տնտեսական կենտրոնախույս շարժումները, որը կդառնա լրացուցիչ եւ բացառիկ լծակներով օժտված գործիք իշխանության ներսի հակասությունները զսպելիս, սա դեռ հետո կերեւա: Պարզ է սակայն մի բան՝ այս նոր կառույցի ղեկավարը շատ մեծ լիազորությունների տիրապետելով՝ պարզապես մշտապես կարող է հայտնվել լարի վրա քայլողի վտանգավոր վիճակում, քանի որ որքան լիազորությունները մեծ են, այնքան ավելի որոշումների ճակատագրականության ու սխալվելու հնարավորությունը մեծանում է: Հավանաբար սա հաշվի են առել կառույցի ղեկավարի թեկնածությունը նկատի ունենալիս, քանի որ Ա. Հովսեփյանի՝ հապճեպ որոշումներ չկայացնելու, տասնյակ անգամներ չափելու եւ ապա մեկ կտրելու գործելակերպը գուցե հավասարակշռի կառույցի մեծ լիազորությունների վեկտորը: Տեսնենք թե ինչ դուրս կգա այս նոր կառույցից:

Իսկ ընդհանրապես, եթե լայն առումով նայենք՝ հանրության համար որեւէ նոր կառույցի ստեղծումը կգնահատվի, եթե պետք է օգնի իրավապահ եւ քննչական մարմինների հանդեպ նրա վստահության բարձրացմանը: Դրվա՞ծ է արդյոք նման խնդիր, թե՞ միայն ներիշխանական ազդեցությունների վերաբաշխման խնդիրն է լուծվում, հանրությանը միայն սա է հետաքրքրում: Երկրորդի դեպքում հասարակությունը ոչ մի շահ չունի այդպիսի վերակազմավորումներից:



# Ապագա մանկավարժները երդվեցին հավատարիմ մնալ իրենց կոչմանը

Մանկավարժական պետական համալսարանի 1-ին կուրսի շուրջ 1600 ուսանողներ ավանդույթի համաձայն այս տարի եւս մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի տուն-թանգարանի բակում երդվեցին հավատարիմ մնալ ուսուցչի վեհ մասնագիտությանն ու կոչմանը:

Ապագա մանկավարժներին շնորհավորեց եւ օրհնության խոսք հղեց Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն, հոգեշնորհ հայր **Վարդան վարդապետ Նավասարդյանը**՝ փոխանցելով Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի օրհնանքի խոսքը: «Մանկավարժությունը մարդուն բարոյական, իմացական արժեքների մեջ հաստատելու, վերահաստատելու եւ վերաիմաստավորելու մեծ առաքելություն է: Որպես նորանկախ պետության կերտողներ եւ հայ եկեղեցու ժառանգորդներ՝ առողջ գիտակցությամբ պետք է կարողանանք առնել առավելագույնը եւ տալ առավելագույնը ապագային»,- ասաց Վարդան վարդապետը:



Ուսանողներին շնորհավորեց համալսարանի ռեկտոր **Ռուբեն Միրզախանյանը**: «Դուք ընդունվել եք համալսարան, դարձել ուսանող, դա իսկական հաղթանակ է: Մանկավարժական համալսարանը ներկայումս ապրում է բավականին լուրջ ու պատասխանատու փոփոխությունների եւ զարգացման ժամանակահատված: Թող լուսավոր լինի ձեր ուղին ուսուցչի պատասխանատու եւ անհրաժեշտ գործունեության մեջ»,- մաղթեց ռեկտորը: Նա խոստացավ անել ամեն ինչ, որ տարիներ անց ուսանողները հպարտությամբ արձանագրեն, որ հենց Մանկավարժական համալսարանի շրջանավարտներն են:

Ապագա մանկավարժներին բարեմաղթանքի խոսք հղեց նաեւ Ֆինլանդիայի Օուլուի համալսարանի մանկավարժական կրթության ֆակուլտետի դեկան **Ռիտա-Լիզա Կորկեամակին**: Խոսելով Հայկական պետական մանկավարժական եւ Օուլուի համալսարանների համագործակցության մասին՝ Կորկեամակին նշեց. «Դուք առաջին ծիծեռնակներն եք, որ պիտի տեսնեք ու զգաք մեր համագործակցության արդյունքները: Համագործակցության երկու տարիների ընթացքում մենք համոզվեցինք, որ դուք շատ տաղանդավոր եւ առանձնահատուկ ազգ եք, եւ ձեզ համար կրթության դերը առանձնահատուկ նշանակություն ու կարեւորություն ունի»:

Մասնագիտական կրթության եւ կիրառական մանկավարժության ամբիոնի դոկտոր **Շողիկ Ոսկանյանը**, կարեւորելով օրվա խորհուրդը, ասաց. «Դուք պետք է դառնաք նորօրյա բարեփոխված դպրոցի հույսն ու ապավենը, ինչպես նաեւ ապագան ու կենսունակությունը: Դարեր շարունակ հայ ժողովուրդը եղել եւ գոյատեւել է դպրոցի, կրթության եւ դաստիարակության շնորհիվ: Մնացեք շիտակ ու վեհ, եղեք ազնիվ ու բարի, եւ ձեզանով ավելացրեք այս երկրի բարին ու գեղեցիկը: Հետամուտ եղեք բոլոր այն լուսավոր ու վեհ գաղափարներին, որի կրողն ու սերունդներին փոխանցողը լինելու եք դուք»: Իսկ վերջում, ուսանողներին հղելով Խրիմյան Հայրիկի պատգամը, ավելացրեց՝ արեւի պես նայեք աշխարհին, քանզի կրթությունն ու դաստիարակությունն են կերտում մարդկությունը, դաստիարակում հային եւ մարդուն:

Սեպտեմբերյան այս մեծ եւ հիշարժան տոնակատարությանը առաջինկուրսեցիներին ողջունեցին նաեւ ՀՀ ժողովրդական արտիստ **Զիվան Գասպարյանն** ու Մանկավարժական համալսարանի շրջանավարտ, ամբիոնի վարիչ, ՀՀ վաստակավոր արտիստ **Արա Գեւորգյանը**:

Միջոցառումը ամփոփվեց գեղեցիկ համերգային ծրագրով:

**ՍՈՆԱ ԱՐԱՄՅԱՆ**

# «Ես նման անձնավորության որպես տնտեսագետի չեմ ընդունում»

## *Թաթուլ Մանասերյանը՝ Հրանտ Բագրատյանի մասին*

Անդրադառնալով Հրանտ Բագրատյանի հրապարակային ելույթներին եւ կանխատեսումներին՝ երեկ տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ, տնտեսագետ, «Այլընտրանք» կենտրոնի ղեկավար Թաթուլ Մանասերյանն ասաց. «Ես նման անձնավորության որպես տնտեսագետի չեմ ընդունում, չեմ ճանաչում, առավել եւս մարդը համարձակություն չի ունեցել նստել եւ տղամարդավարի վերլուծել այն, ինչ վերաբերում է տնտեսագիտությանը: Եթե այդ մարդը այդ կարողությունները ունի եւ անհավասարակշիռ կեցվածքով կարող է միայն «համբալներ» եւ այլ արտահայտություններ անել, ուրեմն դա իր գործն է, իրեն կարող եք հարցնել կամ այլոց»: Շարունակելով՝ Թաթուլ Մանասերյանը հայտնեց, որ Բագրատյանին դասական վճռով գրագող են համարում: «Իրեն հարցրեք, եւ մի մարդ չէ, մի քանիսն են իր թիմակիցներից՝ Մովսես Արիստակեսյան, Մանե Հակոբյան, մյուսները: Ինքը շատ բան կարող է չընդունի, դատարանի վճիռ կա», ասաց նա:

**Ա. Ս.**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 581841, 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

# Կարեւոր քայլ՝ սահմանամերձ բնակավայրի սոցիալական խնդիրները լուծելու ուղղությամբ



ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար **Արտեմ Ասատրյանը** եւ ՀՀ Տավուշի մարզպետ **Արմեն Ղուլարյանը** հանդիսավորությամբ բացեցին սոցիալական ծառայությունների առաջին ինտեգրված կենտրոնը Նոյեմբերյան քաղաքում:

Շնորհավորելով ներկաներին՝ նախարարը նշեց. «Մենք նպատակ ենք ունեցել սահմանամերձ Նոյեմբերյանում ունենալ այնպիսի կենտրոն, ինչպիսին ունենք Երեւանում, հանրապետության մյուս վայրերում: Կարեւորում եմ, որ մեկ կենտրոնում, մեկ պատուհանի միջոցով մեր քաղաքացիները կստանան արդիական ծառայություններ: Երկրորդ կարեւոր նպատակը սոցիալական աշխատողի ինստիտուտի ներդրումն է: Դրամական վճարումների հետ կապված խնդիրներն այսուհետեւ կատարվելու են ավտոմատացված տեղեկատվական համակարգերի միջոցով, իսկ բազմաշերտ խնդիրներ ունեցող ընտանիքների կարիքների գնահատումն ու դրանց հիման վրա վերականգնողական բոլոր աշխատանքներն իրականացնելու են սոցիալական աշխատողները: Ծրագրի շրջանակներում սոցիալական աշխատողներն անցել են վերապատրաստումներ, կենտրոններին տրամադրվել են նոր տեխնիկական միջոցներ: Գործընթացը լինելու է շարունակական, ամբողջ հանրապետությունում ունենալու ենք 55 նմանատիպ կենտրոններ: Այս կենտրոնը Տավուշի մարզում առաջինն է եւ մենք պարոն մարզպետի հետ քննարկում ենք մարզի մյուս տարածաշրջաններում նման կենտրոնների բացման հնարավորությունը»:

Պարոն Ղուլարյանը շնորհակալություն հայտնեց ժամանակակից, վերանորոգված եւ վերազինված կենտրոնի համար եւ ավելացրեց. «Ինտեգրված սոցիալական ծառայությունների նոր կենտրոնն ապահովելու է ծառայությունների նոր որակ եւ սպասարկման նոր աստիճան: Կարեւորում եմ, որ այն բացվեց սահմանամերձ տարածաշրջանում, սկսում ենք ոչ թե մարզկենտրոնից, այլ Նոյեմբերյանից, որտեղ սոցիալական խնդիրներով շատ ավելի մեծ թվով մարդիկ են դիմում: Շնորհակալ եմ համատեղ, արդյունավետ աշխատանքի համար եւ պատրաստ եմ համագործակցության՝ մարզի մյուս տարածաշրջաններում եւս նման կենտրոններ ստեղծելու համար»:

Բացման արարողությունից հետո նախարարը եւ մարզպետը հանդիպեցին համայնքների, սոցիալական ծառայությունների, մարզում գործող հասարակական կազմակերպությունների ղեկավարների, մարզպետարանի աշխատակիցների հետ:

Դիմելով ներկաներին՝ պարոն Ասատրյանը նշեց. «Մենք կարեւոր գործընթացի սկիզբն ենք դնում միասին. կենտրոնի բացումն առաջին քայլն է: Սոցիալական պաշտպանության ոլորտում մենք ընդհանուր բարեփոխումներ ենք իրականացնում, եւ իմ ցանկությունն էր՝ ձեզ հետ քննարկել առկա բոլոր խնդիրները, լսել ձեր մտահոգություններն ու առաջարկությունները, պատասխանել ձեր հարցերին: Դրա համար ենք ընտրել այս ձեւաչափը եւ եկել ենք այս կազմով՝ նախարարի առաջին տեղակալ, նախարարության առանձնացված եւ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ»:

Նախարարը մանրամասնորեն ներկայացրեց ինտեգրված ծառայությունների գաղափարախոսության, նպատակների, տեղերում սոցիալական ծառայություններ մատուցող պետական եւ հասարակական կառույցների համագործակցության, սոցիալական աշխատանքի, սոցիալական աշխատողի ինստիտուտի կայացման ուղիների վերաբերյալ իր մոտեցումները:

Ներկաների հարցերին նախարարը եւ ոլորտների պատասխանատուները տվեցին պատասխաններ, պարզաբանումներ:

Ինտեգրված սոցիալական ծառայությունների կենտրոնների ձեւավորումը՝ համագործակցության լայն հնարավորություններով, քաղաքացիների սոցիալական խնդիրների լուծման նոր մոտեցումներով եւ աշխատաոճով հույս է ներշնչում, որ այսուհետ ծառայությունները կդառնան ավելի մարդակենտրոն եւ հասցեական: Դրա համար ստեղծված են անհրաժեշտ բոլոր պայմանները: Գործընթացն անդառնալի է եւ շարունակական:

# Արմավիրցի թոշակառուն չի կարողանում ստանալ 2010-ի կենսաթոշակը

Վերջին 2-3 տարիներին Ռուսաստանի Դաշնությունում բնակված եւ Հայաստան վերադարձած կենսաթոշակառու, Արմավիր քաղաքի Սայաթ-Նովա փողոցի 23 շենքի բնակարան 3-ի բնակիչ Թելման Արիստակեսյանը չի կարողանում ստանալ 2010-ի ամբողջ տարվա իր կենսաթոշակը: Այդ մասին նա հայտնել է մեր թերթի խմբագրությանն ուղարկած նամակում:

Թելման Արիստակեսյանը նշում է, որ 2010-ից ապրել է Ռուսաստանի Դաշնությունում՝ իր տղայի տանը, հիվանդության պատճառով ավելի վաղ վերադառնալու հնարավորություն չի ունեցել, բուժվել է այնտեղ, ապա եւ ստացել ՌԴ քաղաքացիություն: Արմավիր է վերադարձել 2013-ին, դիմել է տեղի սոցիալական ապահովության բաժին, որտեղի աշխատակցուհին իրեն տեղեկացրել է, որ 420 հազար դրամ ունի ստանալու: Սակայն նա նշել է, որ տվյալ՝ մարտ ամսին այդ գումարը չի կարող ստանալ, քանի որ ցուցակներն արդեն ուղարկվել են եւ խորհուրդ է տվել գալ հաջորդ ամսին: Թոշակառուն այդպես էլ վարվել է, բայց նրան թոշակը չեն տրամադրել ոչ ապրիլ, ոչ մայիս, ոչ էլ մյուս ամիսներին:

Դիմելով թերթի խմբագրությանը՝ Թելման Արիստակեսյանը հայտնում է, որ դիմել է աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն, բայց այնտեղ նրան չեն լսել եւ ներս չեն թողել, ուստի հարկադրված խնդրում է թերթի աջակցությունը այս հարցում:

Ներկայացնելով թոշակառուի նամակի բովանդակությունը, աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության ուշադրությունն ենք հրավիրում եւ հույս հայտնում, որ նախարարությունը հնարավորինս արագ եւ օրենքի ընձեռած հնարավորությունների սահմաններում կկարգավորի այս հարցը:

Ա. Ս.

ՈՂՋՈՒՅՆՆԵՐ ԳԼԽԱՎՈՐ ՆԵՐԴՆՈՂԻՑ

# Գյունտեր Պիլարսկին շնորհավորում է Քաջարան քաղաքի կազմավորման հոբելյանը



***Քաջարան քաղաքի կազմավորման 55-րդ հոբելյանի կապակցությամբ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի» հիմնական բաժնետեր, «ՔՐՈՆԻՄԵՏ Մայնինգ ԲԸ» խորհրդի նախագահ Գյունտեր Պիլարսկին շնորհավորական նամակ է հղել Քաջարանի քաղաքապետարանին, որում, մասնավորապես, նշած է.***

**Հարգելի քաղաքապետ, սիրելի քաջարանցիներ.**

«ՔՐՈՆԻՄԵՏ» ընկերությունների խմբի, անձամբ իմ եւ ընտանիքիս անունից ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ՝ Քաջարան քաղաքի կազմավորման 55-րդ հոբելյանի կապակցությամբ:

Վերջին տասնամյակում, հանդիսանալով Հայաստանի Հանրապետության ամենախոշոր ձեռնարկություններից մեկի՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի» հիմնական բաժնետերը, համոզվել եմ, որ մեր ընկերության հաջողությունները հիմնականում պայմանավորված են քաջարանցիների աշխատասիրությամբ, սկզբունքայնությամբ եւ մասնագիտական բարձր կարողություններով: Քաջարանցիներն իրենց մարդկային նկարագրով արդարացնում են իրենց եւ իմ սիրելի քաղաքի անվանումը, ես հպարտ եմ, որ գործ ունեմ իսկապես քաջ, խիզախ եւ շիտակ մարդկանց հետ:

Քաջարանցիների մի քանի սերունդներ իրենց անգնահատելի ավանդն են ներդրել ոչ միայն Քաջարան քաղաքի, այլ նաեւ մեր ձեռնարկության՝ ԶՊՄԿ-ի կայացման եւ զարգացման գործում: Մենք միասին դժվարին ճանապարհ ենք անցել՝ չընկրկելով խոչընդոտների, անլուծելի թվացող խնդիրների, նույնիսկ համաշխարհային տնտեսական ճգնաժամի առաջ եւ այսօր հպարտությամբ կարող ենք արձանագրել, որ մեր համատեղ ջանքերի եւ Հայաստանի իշխանության ամենօրյա հոգածության շնորհիվ Քաջարանն, իրավամբ, համարվում է Հայաստանի տնտեսության լոկոմոտիվը:

Հպարտանալով մեր քաղաքի ձեռքբերումներով, համոզված եմ, որ Քաջարանի լավագույն տարիներն առջեւում են: Լիահույս եմ, որ միասին կապահովենք մեր սիրելի քաղաքի կայուն եւ շարունակական զարգացումը: Կանենք հնարավորը, որ քաջարանցիների հաջորդ սերունդները եւս իրենց եւ իրենց երեխաների ապագան կառուցեն Քաջարանում՝ ապրելով ապահով եւ բարեկեցիկ կյանքով:

***«ՔՐՈՆԻՄԵՏ Մայնինգ ԲԸ» խորհրդի նախագահ,***

***Գերմանիայի Դաշնային Հանրապետության (Բադեն-Վյուրտենբերգ) Հայաստանի Հանրապետության պատվավոր հյուպատոս,***

***Ձեր բարեկամ՝***

ԳՅՈՒՆՏԵՐ ՊԻԼԱՐՍԿԻ
ՀՀ-ում «ՔՐՈՆԻՄԵՏ Մայնինգ ԲԸ»-ի ներկայացուցչություն

# Անսահմանափակ զանգեր «Իմ աշխարհը» ծառայությամբ՝ օրական ընդամենը 25 դրամի դիմաց

**«Իմ աշխարհը» ծառայությունն այժմ հնարավորություն է ընձեռում «Իմ աշխարհը» ցանկում ներառված ՎիվաՍել-ՄՏՍ-ի համարների բաժանորդներին զանգահարել անսահմանափակ՝ օրական վճարելով ընդամենը 25 դրամ, իսկ ԱՊՀ երկրների եւ Վրաստանի օպերատորների հեռախոսահամարների ուղղությամբ՝ բացառիկ սակագներով:**

**Ի դեպ, 25 դրամը գանձվում է միայն այն օրերին, երբ բաժանորդն առնվազն մեկ անգամ զանգահարում է ցուցակում ընդգրկված՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ի համարներից մեկին:**

**Հիշեցնենք, որ «Իմ աշխարհը» ծառայությունը թույլ է տալիս ընտրել մինչեւ 5 հեռախոսահամար, որոնցից 4-ը կարող են լինել ՎիվաՍել-ՄՏՍ-ի հեռախոսահամարներ, իսկ 1-ը՝ ինչպես ՎիվաՍել-ՄՏՍ-ի, այնպես էլ Վրաստանի կամ ԱՊՀ ցանկացած երկրի օպերատորի հեռախոսահամար:**

**Դեպի «Իմ աշխարհը» ցուցակում ներառված հեռախոսահամարներ զանգահարելու պայմաններ**

| Ուղղություններ | Զանգի արժեք |
| --- | --- |
| Դեպի ՎիվաՍել-ՄՏՍ-ի ցանց | 25 դրամ ամբողջ օրվա համար |
| Դեպի Ռուսաստան | 50 դրամ/րոպե |
| Դեպի Վրաստան | 60 դրամ/րոպե |
| Դեպի ԱՊՀ այլ երկրներ | 42 դրամ/րոպե |

**Մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարելի է օգտվել www.mts.am կայքից կամ pda.mts.am բջջային կայքից, զանգահարել 111 անվճար հեռախոսահամարով, հաղորդակցվել մեզ հետ «111 օնլայն» պորտալի միջոցով, կամ այցելել մեր սպասարկման կենտրոններից որեւէ մեկը:**

# Թուրքական բարբարոսության սովորական պատմություն

## Վերհիշելով 1955 թվի սեպտեմբերի 6-7-ը

***Ստորեւ թարգմանաբար՝ Փարիզում գործող «Եվրոպա եւ Արեւելք» ընկերության տնօրեն Վարուժան Սիրապյանի հիշողությունները այդ դաժան օրերի մասին:***

Երեւի հազիվ տասը տարեկան էի, երբ Ստամբուլում տեղի ունեցան սեպտեմբերի 6-7-ի դեպքերը, որոնք իրականում ցեղասպանության համազոր էին: Ինը ժամվա ընթացքում կատաղած խմբավորումներ, գյուղացիներ, բանվորներ, անգործներ՝ հեռավոր շրջաններից մեքենաներով Ստամբուլ բերված, շրջում էին փողոցներով, յուրաքանչյուրի ձեռքում նմանատիպ մահակներով, որոնք կարծես գործարանային արտադրանք լինեին: Սկզբում նրանց վերահսկում էին քեմալիզմի մոլեռանդ ակտիվիստները, ծայրահեղական ազգայնականների մի խումբ ուսանողներ: Բայց շուտով ամեն ինչ դարձավ անվերահսկելի: Ոստիկանությունը պասիվ էր, երբեմն նույնիսկ համագործակցող:

Ամեն ինչ ապատեղեկատվությունից էր սկսվել: «Իստամբուլ էքսպրես» թերթում «Ռումբ է գցվել Աթաթուրքի տան վրա» սադրիչ վերնագրով մի հոդված էր տպագրվել: Իրականում դա ինքնաշեն մի փոքրիկ սարք էր, որը թուրքական հակահետախուզության աշխատակիցներից մեկը գցել էր տան վրա՝ պատճառելով շատ փոքր վնաս: Թեսալոնիկեի այդ տանը երիտասարդ տարիներին ապրել էր Մուստաֆա Քեմալը: Թերթի սեպտեմբերի 6-ի հավելյալ համարների տպագրության որոշումը կայացրել էր խմբագրի տեղակալ Գյոկսին Սիպահիօղլուն:

Տարերային ցույցերը անմիջապես վերածվեցին կազմակերպված սպանությունների եւ հետապնդումների: Ազգությամբ հույն 16 քաղաքացի, որոնցից 2-ը քահանաներ, եւ մեկ հայ սպանվեցին: 32 հույներ ստացան լուրջ վնասվածքներ: 4348 խանութներ, որոնք պատկանում էին հույների, հայերի եւ հրեաների, հարձակման ենթարկվեցին եւ թալանվեցին: 110 հյուրանոցներ, 27 դեղատներ, 23 դպրոցներ, 21 գործարաններ, 70 եկեղեցիներ, երեք գերեզմանատներ եւ ոչ մահմեդական համայնքների անթիվ-անհամար տներ լրջորեն վնասվեցին: Բռնաբարությունների թիվը հնարավոր չեղավ ճշգրտել, որովհետեւ նման բարբարոսության զոհ գնացած ընտանիքները չէին ցանկանում ամոթանքին ավելացնել անպատվությանը: Բայց հետզհետե բերանները բացվեցին, եւ հայտնի դարձավ, որ զոհերի թվում ճանաչված հրեա մի ոսկերչի կինն էր եղել:

Մեր թաղամասում՝ Շիշլիում մի ալբանացու պատկանող հացի խանութ կար, որի տերը ամեն երեկո «չորեք» էր բաժանում դիմացի ոստիկանատան աշխատակիցներին: Սեպտեմբերի 6-ի երեկոյան ամբոխը, ենթադրելով, որ տերը հույն է, ջարդ ու փշուր արեց նաեւ նրա խանութը. երբ խեղճ մարդը ոստիկանատուն էր գնացել բողոքելու, նրան պատասխանել էին. «Ներեցեք, բայց ոչինչ անել չենք կարող: Այսօր մենք թուրք ենք, ոստիկաններ չենք»:

Դեպքերին հաջորդող ամիսներին եւ տարիներին փոքրամասնություններին պատկանող մեծ թվով քաղաքացիներ, որոնք ենթարկվել էին բռնությունների, հեռացան Թուրքիայից: Նրանք հասկացել էին, որ Հայոց ցեղասպանությունից 40 տարի անց թուրքը մնում է թուրք, եւ արտաքնապես արդիական թվացող այդ հանրապետությունում մարդկանց մտայնությունը չէր փոխվել:

Հետագայում հաստատվեցին այն ենթադրությունները, որ թուրքական հակահետախուզության աշխատակիցն էր մասնակից Աթաթուրքի տան վրա կատարված այդ հարձակմանը: Բայց մեղավոր ճանաչվելու փոխարեն նա պաշտոնի բարձրացում ստացավ՝ ի նշան երախտագիտության: Իսկ թերթում տպագրված հրահրող վերնագրի հեղինակը՝ Սիպահիօղլուն, որոշ ժամանակ անց տեղափոխվեց Փարիզ եւ այնտեղ հիմնեց (ո՞ւմ փողերով) «ՍԻՊԱ» լրատվական գործակալությունը: Հետագայում նախագահ Շիրակի կողմից նա նույնիսկ արժանացավ Պատվո լեգեոնի շքանշանին:

Թարգմ. Հ. Ծ.

# Գարլոս Մենեմը հայ չէ՛

**«Ազգ»ի սեպտեմբեր 24-ի թիւին մէջ կարդացինք Մ.Խ. ստորագրութեամբ «Տարբեր երկրների հայկական ծագմամբ նախագահներ» գրութիւնը, որուն նիւթը, կ'ըսէ հեղինակը, «քաղել ենք սոցիալական ցանցերից»: Յօդուածին հեղինակը (կ'ենթադրենք՝ թերթի վաստակաւոր լրագրողներէն Մարիետա Խաչատրեանը) ներկայացուցած է Լիբանանի երկու, Սուրիոյ մէկ, եւ Արժանթինի մէկ նախագահ, որոնց հայկական ծագում վերագրուած է: Ան կը յայտնէ, թէ այդ նոյն աղբիւրներուն յիշած ու Լիբանանի երբեմնի նախագահ Քամիլ Շամունին վերագրուած հայկական ծագումը շինծու է:**

**Մենք չենք գիտեր, թէ ո՞ր մէկ «սոցիալական ցանց»ը աղբիւր եղած է այս գրութեան, սակայն մեր կարծիքով, բուն սկզբնաղբիւրը Time to Analyze ռուսատառ կայքագիրն (բլոգ) է, որ Յունուար 14, 2012ին հինգ նախագահներուն (Քամիլ Շամունը ներառեալ) հայկական ծագումը պնդող հրապարակում մը ըրած էր՝ «Армяне, ставшие президентами за пределами Родины» վերնագրով: Արժանթինի նախկին նախագահ Գարլոս Մենեմի բաժինը կու տանք ստորեւ.**

**«Карлос Менем — президент Аргентины в период 1989 по 1999. Родился в армяно-алавитской семье иммигрантов из Сирии. В Аргентине приняли христианство, Карлос Менем был крещен в Армянской Католической Церкви. При правлении Менема армянская община Аргентина стала одной из главных движущих сил мирового армянского лобби. Карлос Менем и по сей день является одним из главных действующих лиц армянского лобби в Аргентине» (http://timetoanalyze.wordpress.com/page/2/).**

**Ընթերցողը կրնայ թարգմանութիւնը բառացիօրէն գտնել «Ազգ»ի հրապարակումին մէջ: Այս պարբերութիւնը, ըստ Google-ի սեպտեմբեր 24-ի մեր որոնումին, 18 ռուսերէն կայքէջերու կամ Դիմագիրքի (Facebook) էջերու մէջ արտատպուած է այնուհետեւ:**

**Ի պէտս զարգացելոց, որոնց շարքին՝ «Արմենպրես»ին, որ ոչ-խրախուսելի «զուգադիպութեամբ» այդ նոյն տեղեկութիւնները կրկնած է... սեպտեմբեր 24ի թողարկումով, հարկ է ճշդել, որ բացի հանրագիտարանային այն փաստէն, որ Մենեմ 1989-1999 թուականներուն Արժանթինի նախագահ եղած է, մնացեալը, մեղմ ասած, սոսկ պատմաշինարարութիւն է կամ, ինչպէս Հ. Վարդան Հացունի գրած է առիթով մը, «աներեւոյթի մէջ թափառում»:**

**Տողերս գրողը Նոյեմբեր 2012-ին Against Stupidity («Ընդդէմ յիմարութեան») վերնագրուած գրառում մը զետեղած էր (անգլերէն ու սպաներէն տարբերակներով) armeniaca-haygagank.blogspot.com կայքագրին մէջ՝ ուշադրութիւն դարձնելով այդ տեղեկութիւններուն անհիմն բնոյթին, բայց պարզ է, որ այդ անդրադարձը ռուսագիր կամ հայագիր հեղինակներու աչքէն վրիպած է՝ համացանցային ծովուն մէջ, թերեւս նաեւ լեզուական պատճառներով:**

**Արդ, փորձենք կարելի ընդլայնումով ներկայացնել մեր առարկութիւնները:**

**Այսպէս.**

**Մենեմ ծնած է ալաուիական, ո՛չ թէ «հայ-ալավիական ընտանիքում». հօրը անունը Սաուլ Մենեհեմ էր, մօրը անունը՝ Մոհիպէ Աքըլ: Եթէ այս անուններէն մէկուն ետին հայկական կապ մը կայ, Մենեմի, որ ընդհանրապէս խուսափած է իր արմատներուն մասնաւոր անդրադառնալէ, կեանքը մանրակրկիտ կերպով հետազօտած արժանթինցի բազմաթիւ լրագրողներ չեն յաջողած ո՛չ զայն բացայայտել եւ ո՛չ ալ, թէկուզ բամբասանքի կարգով, ակնարկել:**



**Ըստ առաջին կնոջ (1966-1991)՝ Զուլեմա Եոմայի հետ 2002-ին կատարուած հարցազրոյցի մը, Մենեմ ծնունդով մահմետական եղած է ու կաթողիկէ մկրտուած՝1966-ին: Եթէ ան մկրտուած ըլլար Արժանթինի «Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ» մէջ, իրաւականօրէն չէր կրնար նախագահ ընտրուած ըլլալ 1989-ին, որովհետեւ մինչեւ 1994-ի բարեփոխումը, Արժանթինի Սահմանադրութիւնը կը պահանջէր, որ երկրի նախագահն ու փոխնախագահը Արժանթին ծնած ըլլային ու պատկանէին «Կաթողիկէ Հռոմէական եկեղեցւոյ»: Աւելցնենք, որ Մենեմի նախագահութեան տասնամեակին, նման տարածայնութիւն բացարձակապէս գոյութիւն ունեցած չէ արժանթինահայ համայնքին մէջ: Ի դէպ, ընդամէնը մէկ հայ կաթողիկէ եկեղեցի կայ Արժանթինի մէջ. նման պնդում հալած իւղի տեղ ընդունողները կրնան Նարեկ Ս. Տիրամօր եկեղեցւոյ տոմարները ստուգել:**

**1990-ական թուականներուն արժանթինահայ համայնքը «համաշխարհային հայկական լոպպի»ին շարժիչ ուժերէն մէկը չէր: Մենեմ 1995ին ամբողջական վեթոյի ենթարկած է արժանթինեան խորհրդարանի զոյգ պալատներուն կողմէ վաւերացուած թիւ 24559/95 օրէնքը, որ Ապրիլ 24ը կը հռչակէր «Մերժումի եւ պայքարի օր՝ ընդդէմ մարդու դէմ մարդու խտրականութեան»՝ մեկնելով հայկական ցեղասպանութեան փաստէն:«Համաշխարհային հայկական լոպպի»ի իբրեւ թէ շարժիչ ուժ արժանթինահայ համայնքը այնքան ուժ չունէ՞ր, որ իր «հայազգի բարեկամ»ը համոզէր՝ վեթոյի գաղափարէն հրաժարելու: Ամբողջական վեթոն կ'ենթադրէր, որ օրէնքը այլեւս կարելի չէր վերատեսութեան ենթարկել խորհրդարանին մէջ: Այդ օրէնքը, տարբեր բանաձեւումով, վերստին վաւերացուած է խորհրդարանի զոյգ պալատներուն կողմէ նոյեմբեր-դեկտեմբեր 2006-ին ու երկրի հանգուցեալ նախագահ Նեստոր Քիրշնէրի կողմէ հրապարակուած՝ յունուար 2007-ին, այսինքն՝ Մենեմի վեթոյէն տասներկու տարի ետք:**

**Եթէ Մենեմ 2005-էն ի վեր՝ Արժանթինի Ծերակոյտի (սենատ) անդամ վերջին տասնամեակին շարունակած է «արժանթինահայ լոբբիի սերտ բարեկամներից մնալ», ատիկա որեւէ փաստական դրսեւորում ունեցած չէ: Անոր անունը ընդհանրապէս անհետացած է արժանթինահայ մամուլի էջերէն: Այս ժամանակաշրջանին, Մենեմ աւելի մտահոգ էր փտածութեան (կոռուպցիա) մեղադրանքներով, որոնց հետեւանքով, ի դէպ, յունիս 2013-ին եօթը տարուան բանտարկութեան (տարիքի հետեւանքով՝ տնային կալանք) դատապարտուած է:**

**Եթէ այս բոլոր փաստարկները համոզիչ չնկատուին, կ'արժէ որ բանիմաց ընթերցողը խորհրդածէ հետեւեալ առեղծուածներուն մասին.-**

**Ինչպէ՞ս կարելի է բացատրել, որ 1989-1999-ին, այսինքն՝ տասնամեայ նախագահութեան ամբողջ տեւողութեան, արժանթինահայ մամուլը կամ համայնքը որեւէ ակնարկութիւն ըրած չըլլան Մենեմի հայկական ծագումին:**

**Ինչպէ՞ս կարելի է բացատրել, որ 1992-ին, երբ Մենեմ պաշտօնապէս Թուրքիա այցելած է, թրքական կառավարութենէն պատուոյ անձնագիր ստացած է, որուն հակազդած է հետեւեալ արտայայտութեամբ. «Քանի որ ինծի թուրքօ կ'ըսեն, Թուրքիոյ անձնագիրը պիտի ընդունիմ»: Յիշենք, որ Օսմանեան կայսրութեան նախկին հպատակ բոլոր ժողովուրդները մինչեւ օրս «թուրքօ» (թուրք) մակդիրով յաճախ կը կոչուին՝ յատկապէս արաբները: Ի դէպ, հայերը տասնամեակներ շարունակ պայքարած են, որպէսզի տեղացիները հասկնան այդ մակդիրին անարգական բնոյթը, մինչեւ որ յաջողած են պատմութիւնը սորվեցնել հանրութեան:**

**Ինչպէ՞ս կարելի է բացատրել, որ յունիս 1998-ին, երբ Մենեմ պաշտօնապէս Հայաստան այցելած է, ո՛չ մէկ յայտարարութիւն կատարած ըլլայ, թէկուզ եւ կիսաբերան, իր «նախնեաց» երկրին կամ հայկական ծագումին մասին:**

**Հետաքրքրական է, որ վերոյիշեալ Time to Analyze կայքագիրը (վերջին թարմացումը ապրիլ 2012-ին եղած է) պնդած է, որ «Мы используем лишь самые авторитетные источники на различных иностранных языках» («Մենք միայն կը գործածենք ամենէն հեղինակաւոր սկզբնաղբիւրները տարբեր լեզուներով»): Մենեմի նուիրուած տասնեակ սպաներէն հատորներու անյայտ մնացած այդ «սկզբնաղբիւրը», ըստ երեւոյթին, «գաղտնի ճամբայ» մը ունի, որուն ընդմէջէն վարակի նման սփռուած է այլուր եւ թիւրիմացաբար՝ «Ազգ»ի էջերը թափանցած:**

**Մեր կարծիքով, վերոյիշեալ տեղեկութիւնները կը պատկանին ծագումնաբանական հէքիաթներու այն տեսակին, որ արդէն երկհարիւրամեայ վաղեմութիւն ունի եւ որ մինչեւ օրս կը «հարստացնէ» հայ իրականութիւնը՝ այս կամ այն միջազգային դէմքը հայ ծագումով պճնազարդելու եւ, Պարոյր Սեւակի խօսքով, ազգային սնապարծութիւն արծարծելու աւելորդ փոյթով:**

**Գարլոս Մենեմ հայ չէ: Փաստերու լեզուն ուրիշ բան չի յուշեր:**

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ
Նիւ Ճըրզի (ԱՄՆ)

# Չեզոքացնելու համար մոլդովական գինու ռուսական «ճնշումը»

Մաքսային միությանը միանալու պարտադրանք-երկընտրանքի առաջ կանգնած, իսկ ավելի պարզ ձեւակերպմամբ՝ Եվրոմիության հետ Ասոցիացման համաձայնագիր ստորագրելու համար Ռուսաստանի կողմից ճնշումների տակ հայտնված Արեւելյան գործընկերության երկրներին, ըստ ԵՄ ընդլայնման հարցերով հանձնակատար Շտեֆան Ֆյուլեի, հնարավոր է փոխհատուցում տալ՝ տնտեսական պատժամիջոցներից կրած վնասների համար:

Ֆյուլեն այս մասին ընդամենը սեպտեմբերի կեսերին հայտարարեց, իսկ երեկ արդեն Եվրոպական հանձնաժողովի մակարդակով խոստացվածն ի կատար են ածում: ԵՀ պաշտոնական հաղորդագրության համաձայն, Եվրոպական հանձնաժողովն առաջարկել է Մոլդովայից գինու ներմուծման համար ամբողջապես բացել Եվրոպական միության շուկան: Ընդ որում, առաջարկվում է շուկան ամբողջապես բացել մինչեւ Մոլդովայի հետ Ասոցիացման համաձայնագրի նախաստորագրումը:

Առաջարկը հիմնավորված է այն մոտեցմամբ, որ շուկան բացում են որպես «մոլդովական գինու ավանդական որոշ շուկաներ դրա արտահանման հետ կապված դժվարությունները թեթեւացնելու միջոց»: «Եվրոպական միության շուկան կայուն այլընտրանք է եւ հաստատուն լինելու կենսունակ դեր ունի մոլդովական գինեգործության հատվածի համար: Մոլդովական գինու համար ամբողջապես բաց ԵՄ շուկան, երբ մոլդովացի գինեգործները դժվարության մեջ են, ցույց է տալիս, որ բացի տնտեսական ինտեգրման հաջող ծրագիր լինելուց՝ ԵՄ-ը նաեւ համերաշխության տարածք է», հայտարարել է ԵՄ գյուղատնտեսության հարցերով հանձնակատար Դացիան Սիոլոսը:

Մոլդովայի հետ Ասոցիացման համաձայնագրի, եւ դրա հետ մեկտեղ խոր եւ համապարփակ ազատ առեւտրի գոտու ստեղծման համաձայնագրի նախաստորագրումը նախատեսված է Վիլնյուսում նոյեմբերի վերջին կայանալիք Արեւելյան գործընկերության գագաթաժողովում: Մոլդովական գինիներին մինչեւ այդ փաստաթղթի ստորագրումն արդեն ուզում են ԵՄ մուտքն ապահովել: Հենց այդ նպատակով էլ Եվրոպական հանձնաժողովը առաջարկել է Եվրոպական խորհրդին եւ Եվրոխորհրդարանին՝ արդիականացնել Մոլդովայի հետ առեւտրի պայմանները, ընդ որում, անել հնարավորն այդ գործընթացը արագ ավարտելու համար:

Իհարկե, մոլդովական գինին մեկ օրում եվրոպական ստանդարտներին չի համապատասխանելու, ու թերեւս աշխարհի լավագույն գինիների շարքում էլ չէ, սակայն, ինչպես տեսնում ենք, կարվի հնարավորը՝ մոլդովական գինին ԵՄ շուկայում վաճառելու համար:

Եվ այս դեպքում հետաքրքրական կլիներ լսել հայ փորձագետ ու գործիչ ներկայացող մի քանիսի դատողությունները՝ մոլդովական գինու մրցունակության վերաբերյալ, երբ նույն պատճառաբանությունը բերվում էր հայկական ապրանքների համար՝ ԵՄ-ում անմրցունակ լինելու հիմքով: Հարցի մեկ այլ կողմն է, թե անմրցունակ ապրանքն ինչպես են հիշատակված «մասնագետները» մրցունակ տեսնում Մաքսային միության երկրների շուկաներում:

Պարզապես փաստենք, որ անմրցունակ մոլդովական գինին հաստատ այսպիսի հնարավորության պայմաններում մրցունակ կդառնա, ամեն դեպքում՝ կարվի ամեն ինչ, որպեսզի որոշակի հնարավորություններից օգտվելու տարբերակ ստացած մոլդովական գինին նաեւ վաճառվի, իսկ դա զարգացում է նշանակում, այլ ոչ թե անմրցունակ գինին այնպիսի մի շուկայում սպառելու հեռանկարը, որտեղ կարեւորը, հասկապես ոգելից խմիչքի դեպքում, աստիճանն է ու ազդեցության երկարատեւությունը:

Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

# Սիրիայում արմատական իսլամիստները հեռանում են Ազգային կոալիցիայից

*Կրոնը՝ օրենքի միակ աղբյուր*

Սիրիական ընդդիմության իսլամիստական խմբավորումների արմատականացումը հետզհետե ավելի շատ է ընդգծվում: Բաշար Ասադի կառավարական զորքերի դեմ կռվող ռազմականացած նորանոր կազմավորումներ հայտարարում են իսլամական ծայրահեղականությանը իրենց նվիրվածության եւ ահաբեկչական կազմակերպությունների հետ իրենց կապերի մասին: Ֆրանսպրես գործակալությունը հաղորդում է, որ 13 ընդդիմադիր խմբավորումներ համատեղ հայտարարություն են արել, որ իրենք չեն ճանաչում 2012 թ. նոյեմբերի սիրիական ընդդիմադիր ուժերի ձեւավորած Ազգային կոալիցիան եւ դրա առաջարկած կառավարությունը, ինչպես նաեւ «Ազատ սիրիական բանակը»:



Հայտարարության հեղինակները երկրի բոլոր զինվորական եւ քաղաքացիական խմբերին կոչ են արել միավորվել իսլամի հիման վրա՝ կրոնը ճանաչելով օրենքի միակ աղբյուր եւ մահմեդականների շահերը վեր դասելով յուրաքանչյուր առանձին խմբի շահերից:

Այսպիսով, Սիրիայում արմատական իսլամիստները սահմանազատվում են չափավորական եւ արեւմտամետ Ազգային կոալիցիայից եւ դառնում հակամարտության մասնակից երրորդ լիարժեք ուժը, որը, ըստ երեւույթին, ի վիճակի է խանգարել մյուս երկու ուժերի երկխոսության զարգացմանը:

Արմատական իսլամիստների համատեղ հայտարարության համաձայն, գրոհայինների առնվազն 13 խմբեր պաշտոնապես մտել են «Ալ Ղաիդայի» հետ կապված «Ան Նուսրա ճակատ» շարժման, ինչպես նաեւ «Ահրար աշ Շամի բրիգադի» եւ «Լիվա ալ Թաուհիդ բրիգադի» շարքերը:

Ավելի վաղ հաղորդումներ էին հայտնվել, որ սիրիացի ապստամբների որոշ խմբեր վերջերս մտնում են «Իրաքի եւ Լեւանտի իսլամական պետություն» կազմակերպության շարքերը:

ԱՂԵՏ

# Պակիստանում ուժեղ երկրաշարժից հետո կղզի է հայտնվել



Պակիստանում երեքշաբթի երեկոյան տեղի ունեցած ուժեղ երկրաշարժից հետո հարյուրավոր զոհեր կան: ԱՄՆ-ի երկրաբանական ծառայության տվյալներով, Բելուջիստանի նահանգում արձանագրված ստորերկրյա ցնցումն ունեցել է 7,8 մագնիտուդ: Ռոյթեր գործակալությունը հաղորդում է առնվազն 327 զոհերի եւ 400 վիրավորների մասին: Հիվանդանոցներում տեղերը չեն բավականացնում բոլոր տուժածների համար:

Առավել շատ տուժել է Բելուջիստանի Ավարան քաղաքը, որը երկրաշարժի էպիկենտրոնից ընդամենը 69 կմ հեռավորության վրա է, նշում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը: Քաղաքի բնակելի տների 80 տոկոսը հիմնովին ավերված է: Աղետյալ գոտում աշխատում են փրկարարների խմբեր: Ավերակույտերում, որոշ տվյալների համաձայն, մնացել են բազմաթիվ մարդիկ: Փլատակների մաքրման աշխատանքներին մասնակցում են հարյուրավոր զինծառայողներ, ինչպես նաեւ բանակային ուղղաթիռներ:

Երկրաշարժի օջախը եղել է 20 կմ խորության մեջ: Ուժեղ ցնցմանը հաջորդել են 5,9 մագնիտուդով չորս հետցնցումներ: Մի քանի րոպե ցնցումներ են զգացվել Հայդարաբադում, Լարկանայում եւ այլ քաղաքներում: ՌԻԱ գործակալությունը հաղորդում է, որ թույլ ցնցումներ են զգացվել Հնդկաստանի հյուսիսում եւ մայրաքաղաք Դելիում:

Երկրաշարժի հետեւանքով Պակիստանի ափերի մոտ՝ Արաբական ծովում հայտնվել է նոր կղզի, որի բարձրությունը հասնում է 12 մետրի, լայնությունը մոտ 30 մետր է: Կղզին Գվադար նավահանգստի մոտակայքում է:

Սեյսմագետները չեն բացառում, որ կղզին կարող է լինել ժամանակավոր գոյացություն, այսպես կոչված ցեխային հրաբուխի արդյունք: Օրինակ՝ 1968 թ. տեղի ունեցած երկրաշարժի հետեւանքով նույնպես ծովում առաջացել էր կղզի, որը 1 տարվա գոյությունից հետո անհետացավ:

# Կրկնակի խաբված Ալիֆրամ Հումմաթովը

*1-ին էջից*

Հումմաթովի քաղաքական գործունեության բարձրակետը Թալիշ-մուղանական ինքնավար հանրապետության հռչակումն էր 1993-ի հունիսին, երբ Ադրբեջանը կանգնած էր քաղաքացիական պատերազմի շեմին: Լենքորանում հռչակվելով Թալիշ-մուղանական հանրապետության նախագահ՝ նա փաստացի վերջնագիր է ներկայացրել Հեյդար Ալիեւին, որն արդեն Ադրբեջանի նախագահի պաշտոնակատարն էր: Հումմաթովը պահանջել է Ալիեւի հեռացումը, որպեսզի իշխանության վերադառնա Մութալիբովը, իսկ վարչապես Սուրեթ Հուսեյնովին տրվեն ավելի մեծ լիազորություններ:

Աղբյուրների պնդմամբ՝ 1993-ի օգոստոսին Հումմաթովը երկու հանդիպում է ունեցել Հեյդար Ալիեւի հետ: Կողմերը համաձայնության չեն եկել, եւ փորձառու Ալիեւը հենց Լենքորանում կազմակերպել է իր կողմնակիցների հզոր ցույց, որի մասնակիցները գրոհել են Հումմաթովի հենարան թ. 704 մոտոհրաձգային գումարտակի տարածքը: Երեք ցուցարար զոհվել է, Հումմաթովը եւ նրան սատարող մի խումբ սպաներ ստիպված են եղել հեռանալ Լենքորանից, որտեղ Հեյդար Ալիեւին հաջողվել է վերականգնել սեփական իշխանությունը եւ Թալիշ-մուղանական ինքնավար հանրապետությունը հայտարարել լուծարված:

Հումմաթովը ձերբակալվել, դատապարտվել է մահապատժի, ապա՝ ցմահ բանտարկության, հետագայում դատավճիռը փոխվել է 15 տարվա կալանքի: 2004թ.-ին Հումմաթովին ներում է շնորհվել, նրան զրկել են Ադրբեջանի քաղաքացիությունից եւ արտաքսել Հոլանդիա, որտեղ մինչ այդ հաստատվել էր ընտանիքը:

Ըստ էության, Ալիֆրամ Հումմաթովը Հեյդար Ալեւի իշխանության վերադառնալու հետ կապված Ադրբեջանի ներքաղաքական իրադարձությունների զոհն է: Ադրբեջանում նրան անվանում են «ի բնե արկածախնդիր»: Ամենայն հավանականությամբ, Հեյդար Ալիեւը 1993-ի օգոստոսին Հումմաթովի հետ «բանակցել է», որպեսզի շեղի նրա ուշադրությունը, ժամանակ շահի, մինչեւ կկարողանա Լենքորանում հավաքագրել նախկին կողմնակիցներին: Եվ Հումմաթովը խաբվել է:

Ավելի վաղ նա խաբվել էր Էլչիբեյից, որը Հումմաթովի պահանջով համաձայնել էր ԱԺԾ ծրագրում գրել թալիշներին ինքնավարություն տալու մասին, բայց իշխանության գալով՝ «մոռացել»: Այսօր Հումմաթովը թալիշների համար դարձյալ ինքնավարություն է ուզում եւ հույս ունի, որ Ադրբեջանը կդառնա դաշնային պետություն: Դրա համար նրան Ադրբեջանում անվանում են «անջատողական»:

Կա՞ Թալիշստան՝ հարցի պատասխանը կարող են տալ իրենք՝ թալիշները: Եթե այդ ժողովուրդն իրոք ձգտում է ինքնուրույնության, ապա Հումմաթովի կրկնակի խաբվածությունը նրա համար պիտի դաս դառնա:

## «Կոմիտաս վարդապետ» փառատոնում Կոմիտասին նվիրված ֆիլմի շնորհանդես

Մեկնարկում է «Կոմիտաս վարդապետ» համահայկական փառատոնը, որի շրջանակներում տեղի կունենան համերգներ, գիտաժողովներ եւ այլ միջոցառումներ: «Արմենպրես»-ի հաղորդմամբ, այս մասին լրագրողների հետ հանդիպման ժամանակ խոսեց ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը: «Մենք փորձում ենք աշխարհին էլ ավելի ճանաչելի դարձնել Կոմիտասին: Փորձելու ենք այս փառատոնը ավանդական դարձնել: Փորձում ենք հավատարիմ մնալ Կոմիտասի ձեռագրին եւ անաղարտորեն ներկայացնել հայկական երաժշտությունը»,- ասաց նախարարը: Նախարարն ընդգծեց, որ փառատոնը կտարածվի նաեւ մարզերում, եւ համերգներ կլինեն Էջմիածնում, Գյումրիում, Վանաձորում:

Փառատոնի շրջանակում կկայանա նաեւ Կոմիտասին նվիրված ֆիլմի շնորհանդես: «Կոմիտաս վարդապետ» փառատոնի ղեկավար Սամվել Հարոյանը ներկայացրեց միջոցառումների ծրագիրը եւ հայտնեց, որ ստեղծվել են գեղարվեստական եւ համակարգող խորհուրդներ, որոնք կկարգավորեն փառատոնի ընթացքը: «Կփորձենք լավագույնս ներկայացնել Կոմիտասին՝ իր ամբողջ գործունեությամբ: Փառատոնը ամենամյա դարձնելու համար մեզ լուրջ աշխատանք է սպասում»,- ասաց Հարոյանը:

Փառատոնին մասնակցության հայտ են ներկայացրել սփյուռքահայ եւ այլազգի կատարողներ աշխարհի 11 երկրից: Սեպտեմբերի 26-ից հոկտեմբերի 3-ը ՀՀ սփյուռքի նախարարությունը կազմակերպում է «Կոմիտաս վարդապետ» համահայկական փառատոն, որի շրջանակներում Երեւանում, Գյումրիում, Վանաձորում, Էջմիածնում տեղի կունենան համերգներ, Կոմիտասի կյանքին ու ստեղծագործությանը նվիրված գիտաժողով եւ այլ միջոցառումներ, կհրատարակվեն գրքեր, կթողարկվեն խտասալիկներ:

«Կոմիտաս վարդապետ» համահայկական փառատոնի նպատակն է նորովի արժեւորել բազմաշնորհ հանճարի՝ ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիրի, երաժշտագետի, բանահավաքի, երգչի, խմբավարի, մանկավարժի ու բանաստեղծի անցած ուղին, նոր լույսի ներքո բացահայտել ցեղասպանություն վերապրած արվեստագետի կերպարը:

*«Արմենպրես»*

## «Այդ ես չեմ» ֆիլմը մեծ հաջողություններ ունեցավ

### *«Կինոշոկ» փառատոնում*

«Ոսկե ծիրան» 10-րդ Երեւանի միջազգային կինոփառատոնի «Հայկական համայնապատկեր» ազգային մրցութային ծրագրում առաջին մրցանակի արժանացած «Այդ ես չեմ» ֆիլմը (ռեժիսոր՝ Մարիա Սահակյան) ՍՊՀ եւ Մերձբալթյան «Կինոշոկ» կինոփառատոնում արժանացել է երկու պատվավոր մրցանակների՝ «Լավագույն ռեժիսոր» եւ «Լավագույն օպերատոր» անվանակարգերում: Ֆիլմի օպերատորը Մկրտիչ Մալխասյանն է: Հիշեցնենք նաեւ, որ «Այդ ես չեմ» ֆիլմը «Հայակ» 2-րդ ազգային կինոմրցանակաբաշխությունում արժանացավ «Լավագույն ֆիլմ» մրցանակին: «Այդ ես չեմ» ֆիլմը հայոց շարականի՝ հետզհետե իմաստին մոտեցնող 9-մասանոց տաղի սկզբունքով է եւ շարունակում է զարգացնել Մարիա Սահակյանի առաջին լիամետրաժ աշխատանքի՝ «Փարոսի» բանաստեղծական մտահղացումը: Պատումի կենտրոնում 14-ամյա աղջիկ՝ Եվրիդիկեի աշխարհն է. նա ապրում է հասունացման տարիքի առաջին հուզավառ զգացմունքները: Ֆիլմը տպավորիչ եւ գեղարվեստական գույներով ներկայացնում է այդ անձնական աշխարհը, որը պտտվում է ինտերնետային չաթի սենյակների եւ բջջային հեռախոսի տեսապատկերների շուրջը: Կինոնկարի յուրօրինակությունը պատկերների եւ պոեզիայի երազային աշխարհն է (օգտագործված են Ռիլկեի բանաստեղծությունները Օրփեոսի եւ Եվրիդիկեի մասին, նաեւ հենց Սահակյանի ստեղծագործությունները), որտեղ հայկական բնապատկերը եւս իր դերն ունի: Վերադառնում է մոր նախկին սիրեկանը՝ տեղիք տալով չնախատեսված հետեւանքների եւ զուգահեռների: Սահակյանի խոսքերով՝ ֆիլմը կոչված է արտացոլելու սիրո տարբեր չափումները:

ՄԱՐԻԱ ՄԱՀԱԿՅԱՆ

## Լուսավառության արարողություն Գաֆէսճեան արվեստի կենտրոնում

Գաֆէսճեան արվեստի կենտրոնը տեղեկացնում է, որ սեպտեմբերի 27-ին ժամը 21:00-ին տեղի կունենա լուսավառության հատուկ արարողություն՝ նվիրված կենտրոնի հիմնադիր, ազգային բարերար Ջերարդ Գաֆէսճեանի հիշատակին: Խորհրդանշորեն, լուսավառությունը կհաջորդի Գաֆէսճեան ֆոնդակների պարտեզում կազմակերպվող «Կարին» համույթի հայկական ավանդական պարերի ուսուցման այս տարվա վերջին միջոցառմանը, որն արժանացել էր պարոն Գաֆէսճեանի հատուկ ուշադրությանը եւ անց էր կացվում նրա հովանավորությամբ:

Միջոցառումից անմիջապես հետո, ուղիղ ժամը 21:00-ին, Կասկադ համալիրի աստիճաններին տեղակայված մասնակիցները հատուկ ազդանշանի ներքո կվառեն նախապես տրամադրված լապտերները՝ ի հիշատակ Ջերարդ Գաֆէսճեանի:

Գաֆէսճեան արվեստի կենտրոնը հրավիրում է բոլոր համախոհներին մասնակցելու այս նվիրական արարողությանը եւ հարգանքի տուրք մատուցելու իրենց հայրենակցին:

Գաֆէսճեան արվեստի կենտրոնի (ԳԱԿ) առաքելությունն է ժամանակակից արվեստի լավագույն նմուշները ցուցադրել Հայաստանում եւ աշխարհին ներկայացնել հայկական մշակույթի լավագույնը: 2009 թվականի նոյեմբերին տեղի ունեցած բացումից առ այսօր Գաֆէսճեան արվեստի կենտրոնը, հավատարիմ իր առաքելությանը, կազմակերպում է բազմազան ցուցահանդեսներ, ներկայացնում ժամանակակից արվեստի յուրօրինակ գործեր, իրականացնում ֆիլմերի ցուցադրություններ, համերգաշարեր, դասախոսություններ եւ կրթական ծրագրեր:

Գաֆեսճյան արվեստի կենտրոն

## «Համլետի» համարձակ եւ ռիսկային մեկնաբանություն՝ «Համազգային» թատրոնում

«Համազգային» պետական թատրոնը շուտով հանդես է գալու նորությամբ: **«Ազգի»** հետ զրույցում թատրոնի տնօրեն Վարդան Մկրտչյանն ասաց, որ այժմ աշխատում են Վիգեն Չալդրանյանի հետ եւ ցանկանում են բեմադրել Շեքսպիրի «Համլետը», որը հանդիսականի դատին կներկայացնեն տարեվերջին:

Ընդհանրապես «Համազգային» թատրոնը տարբերվում է իր խաղացանկով, այսինքն այնտեղ բեմադրվում են յուրօրինակ եւ չկրկնվող ստեղծագործություններ: Արդյոք չկա՞ մտավախություն, որ «Համլետը» հայաստանյան բեմերում շատ է բեմադրվել ու կառաջանա հանդիսականի խնդիր: Այն հարցին ի պատասխան Վ. Մկրտչյանն ասաց. «Բացարձակ այդ մտահոգությունը չկա: Մեր մեկնաբանությունը ոչ միայն տարբերվելու է մինչ այս հայկական բեմում եղած բոլոր Համլետներից, այլեւ՝ համաշխարհային բեմում եղածներից: Բոլոր դեպքերում, հայաստանյան բեմերը «Համլետով» այդքան էլ հարուստ չեն, ինչպես ռուսական կամ եվրոպական թատրոնները»:

Վարդան Մկրտչյանը ցավով նշում է, որ այսօր մենք Շեքսպիրին քիչ ենք անդրադառնում, որը ըստ նրա մեծ բաց է մեր թատրոնների խաղացանկերում. «Ինչպես կասեր Փափազյանը. «Համլետը» գործերի գործն է»: Կարծում եմ ինքն իրենով այն բերնդ է, իսկ մեր ներկայացումը կունենա նոր մեկնաբանություն, իր նոր հանդիսականով: Սա լինելու է 21-րդ դարի Համլետ: Իհարկե, պահպանելու ենք էպոխան, զգեստները, բայց մեկնաբանության առումով տարբերվելու է»,- եւ ավելացրեց. «Ներկայացնելու ենք, թե ինչպես է դա առնչվում այօրվա մարդու հետ, այդ ամբողջը կերեւա ներկայացման մեջ, քանի որ Շեքսպիրը դրա հնարավորությունը տալիս է մեզ»:

Կա արդյոք թատրոնի կողմից ներկայացվող 21-րդ դարի «Համլետ» ներկայացման հանդիսատեսի հստակ թիրախային խումբ՝ երիտասարդներ, ավագ սերնդի ներկայացուցիչ, թե՞... հարցին Վարդան Մկրտչյանն պատասխանեց. «Թիրախային խումբը ճաշակով մարդիկ են: Մենք խաղալու ենք բանիմաց եւ արժեք փնտրող հանդիսականի համար, թեկուզեւ՝ մեկ: Նման մարդիկ քիչ են, սակայն կան»:

Թատրոնի տնօրենը չցանկացավ բացել բոլոր չակերտները, սակայն նշեց, որ շատ համարձակ եւ ռիսկային մեկնաբանություն է լինելու:

Նշենք, նաեւ որ «Համազգային» պետական թատրոնը շուտով մեծ հյուրախաղերով հանդես կգա ԱՄՆ-ում, Լոս Անջելոսում՝ Համազգային հայ կրթական եւ մշակութային միության 85 ամյակի շրջանակում: Ներկայացումը հանդիսականի դատին կհանձնվի Լոս Անջելոսի Բեյլս Դոլ եւ ARTL թատերասրահներում:

Վ. Մկրտչյանը «Ազգին» տեղեկացրեց, որ հյուրախաղերի են մեկնում 4 ներկայացմամբ՝ «Սեյլ», «44 աստիճանի վրա», «Ամբան Հուռի» եւ համերգ-ներկայացումով. « Խաղալու ենք մոտ 8-10 ներկայացում, կան ներկայացումներ, որոնք կրկնվելու են եւ կարծում եմ, որ շատ լավ կանցնեն հյուրախաղերը: Կազմը բաղկացած է 16 հոգուց՝ 12 դերասաններ, 4-ն էլ տեխնիկական անձնակազմ՝ Տաթեւ Ղազարյան, Արման Նավասարդյան, Կարեն Խաչատրյան, Արմինե Պողոսյան եւ այլք»:

Մկրտչյանն ուրախությամբ նշեց նաեւ, որ «Համազգային» թատրոնն առաջին անգամ է հյուրախաղերով օվկիանոսն անցնում:

Նշենք, որ հյուրախաղերը հովանավորվում են Համազգային հայ կրթական եւ մշակութային միության կողմից:

Ի դեպ, տեղեկանալով թատրոնի հիմնադիր եւ գեղղեկ Սոս Սարգսյանի վատառողջության մասին, **«Ազգ»** օրաթերթը մեծ դերասանին մաղթում է քաջառողջություն եւ շուտափույթ ապաքինում:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

## «Հայ ֆեստ» թատերական փառատոնի մեկնարկը՝ «Բարձրագույն քիմիայով»

Հոկտեմբերի 1-12-ը տեղի կունենա «Հայ ֆեստ» միջազգային թատերական փառատոնը:

Փառատոնի բացումը կազդարարի Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնի բեմից՝ «1927» թատրոնի (Մեծ Բրիտանիա) «Կենդանիները եւ երեխաները գրավել են փողոցները» մուլտիմեդիա ներկայացմամբ: Այս բեմականացումը կենդանի երաժշտության, կատարման ու հետաքրքրական կինոնկարների եւ անիմացիաների միաժամանակյա միասնություն է: Ի դեպ, ներկայացումը 2011թ. Էդինբուրգի միջազգային թատերական փառատոնին լավագույնների շարքում էր:




11-րդ «Հայ ֆեստ»-ը հանդիսատեսին կներկայանա նոր ոճով եւ նոր տարբերանշանով «Բարձրագույն քիմիա»:

«Հայ ֆեստ»-ի տարբերանշանում, որն ունի Մենդելեեւի աղյուսակի տեսքը, իրենց տեղն են գտել Սերը, Գաղափարը, Գործողությունը, Խիզախությունը, Երազանքն եւ բոլոր այն տարրերը, առանց որոնց անհնար է պատկերացնել փառատոնը:

«Հայ ֆեստ 2013»-ին հանդես կգա 18 երկրի 25 թատերախումբ՝ Մեծ Բրիտանիայից, Արգենտինայից, Իտալիայից, Լատվիայից, Լիտվայից, Իրանից, Ռուսաստանից եւ այլն:

Փառատոնի շրջանակում մշակութասեր հանրությունը հնարավորություն կունենա դիտելու՝ Օսկարաս Կարշունովասի թատրոնի «Միրանդա» ներկայացումը՝ ըստ Վ. Շեքսպիրի «Փոթորիկը» պիեսի (Լիտվա), «1927» թատրոնի (Մեծ Բրիտանիա) «Կենդանիները եւ երեխաները գրավել են փողոցներ» մուլտիմեդիա ներկայացումը, Ա.Ստրինբերգի «Ֆրեկեն Ժյուլի» Վալմիերայի դրամատիկական թատրոնի ներկայացումը (Լատվիա), Յոզեֆ Բոյսի անվան թատրոնի «Ուզբեկ» մոնոներկայացումը (Ռուսաստան), ինչպես նաեւ Cantieri Teatrali Koreja-ի «Պլաստմասե այգիներ» ներկայացումը (Իտալիա):

Փառատոնին ներգրավված են նաեւ թատրոններ ոչ միայն Երեւանից, այլեւ Հայաստանի մարզերից. Գյումրի, Եղեգնաձոր:

Իսկ ահա երեւանյան թատրոններից «Հայ ֆեստ»-ի հիմնական ծրագրում հանդես կգան Հովհ. Թումանյանի անվան Տիկնիկային, «Փոքր» եւ «Միհր» թատրոնները:

«Հայ ֆեստ»-ը նաեւ ուսանողներին հնարավորություն կտա ներկայացնել իրենց աշխատանքները ARMS FEST ուսանողական ծրագրում: Ուրախալի է, որ ուսանողներին եւս տեղ է տրվում ու նրանք երկրորդ պլան չեն մղվում:

Ինչպես անցյալ տարի, այս տարի եւս փառատոնի հյուրերը կանցկացնեն վարպետության դասընթացներ, որոնց ընթացքում կներկայացնեն կատարողական արվեստների ժամանակակից միտումները:

Նշենք, որ «Հայ ֆեստ» միջազգային թատերական փառատոնն առաջին անգամ կայացել է 2003-ին: Փառատոնի նախագահն է Արթուր Ղուկասյանը:

Փառատոնն անցկացվում է մշակույթի նախարարության աջակցությամբ:

Ս. Հ.

# Մխիթարյանն աչքի ընկավ նաեւ գավաթի խաղում



Հենրիխ Մխիթարյանը բացեց իր գոլերի հաշիվը նաեւ Գերմանիայի գավաթի խաղարկությունում։ 1/16 եզրափակիչում «Բորուսիան» հյուրընկալվելիս 2-0 հաշվով պարտության մատնեց «Մյունխեն-1860-ին»։ Հանդիպումը շատ համառ ստացվեց։ Թեեւ ունեցած խաղային առավելությանը, «Բորուսիան» չկարողացավ հիմնական ժամանակում գրավել մրցակցի դարպասը։ Հաղթողը որոշվեց լրացուցիչ ժամանակում։ 105-րդ րոպեին Պիեռ-Էմերիկ Օբամեյանգը հստակ իրացնելով 11 մ հարվածը, վերջապես բացեց հաշիվը։ Իսկ 2 րոպե անց աչքի ընկավ Մխիթարյանը՝ վերջնականապես վճռելով հանդիպման ելքը։ Աջից ստանալով Հոֆմանի փոխանցումը, Մխիթարյանը շրջանցելով մրցակցի դարպասապահին ու պաշտպանին, գնդակն ուղարկեց անպաշտպան դարպասը։

Խաղից հետո Մխիթարյանը բունդեսլիգայի պաշտոնական կայքին իր կարծիքն է հայտնել. «Դժվար էր, քանի որ խաղում էինք ուժեղ թիմի դեմ, որը շատ լավ էր պաշտպանվում։ Ունեցանք մի շարք գոլային պահեր, որոնք սակայն չկարողացանք իրացնել։ Խաղավերջում հաջողվեց ազատ տարածություն գտնել, որի արդյունքում 11 մ-ի իրավունք ստացանք, իսկ հետո կրկնապատկեցինք հաշիվը։

Իհարկե, շատ ուրախ եմ, որ կարողացա թիմի 2-րդ գոլը խփել։ Շատ լավ փոխանցում ստացա Հոֆմանից։ Դաշտի տերերի ֆանատները շատ լավ էին աջակցում իրենց թիմին։ Կցանկանայի շնորհակալություն հայտնել մեր թիմի երկրպագուներին, որոնք մարզադաշտ էին եկել եւ մեր կողքին էին մինչեւ հանդիպման ավարտը։ Մենք հաղթանակը նվիրել ենք նրանց։

Կարծում եմ, որ նախորդ 2 հանդիպումներում հաջողությունը երես էր թեքել մեզնից։ Շատ կարեւոր է, որ կարողացանք հաղթահարել դժվարությունները՝ հաղթանակ տոնելով։ Հիմա պետք է կենտրոնանանք «Ֆրայբուրգի» հետ խաղի վրա։ Այդ թիմի նկատմամբ տոնած հաղթանակը մեզ թույլ կտա լավ տրամադրությամբ մոտենալ «Մարսելի» հետ կայանալիք չեմպիոնների լիգայի հանդիպմանը»։

# Առաջատարի հետ մրցավեճը վճռորոշ կլինի Սամվել Տեր-Սահակյանի համար



Թուրքիայում ընթացող մինչեւ 20 տարեկանների աշխարհի առաջնությունը մոտենում է վերջնագծին։ Ավարտական 2 տուրերից առաջ պայքարն աշխարհի չեմպիոնի տիտղոսի համար հասել է գագաթնակետին։ 7 շախմատիստներ հավակնում են ուժեղագույնի կոչմանը։ Ուրախալի է, որ նրանց թվում է նաեւ Սամվել Տեր-Սահակյանը, որը մրցաշարի վերջնագծում վերագտել է իր խաղն ու վերելքով է հանդես գալիս։

11-րդ տուրում ուշադրության կենտրոնում էր Տեր-Սահակյանի պարտիան առաջատարներից մեկի՝ Ալեքսանդր Իպատովի հետ։ Վերջինիս հաջողվեց ընդհատել հայ շախմատիստի հաղթարշավը՝ պարտիան ավարտելով ոչ-ոքի։ Իսկ ահա մյուս առաջատարը՝ չինացի Յույ Յանյին հաղթելով Անդրեյ Ստուկոպինին, 9,5 միավորով միանձնյա գլխավորեց աղյուսակը։ 9 միավոր ունի Իպատովը, 8,5 միավոր է վաստակել Յուրի Ելիսեեւին հաղթած Յորգ Կորին։ Սամվել Տեր-Սահակյանը 4 շախմատիստների հետ վաստակել 8 միավոր եւ ընթանում է 7-րդ հորիզոնականում։

12-րդ տուրում Սամվելը սպիտակներով խաղալու է առաջատարի՝ Յույ Յանյիի հետ։ Ավելորդ է նշել այդ պարտիայի կարեւորությունը հայ շախմատիստի համար։ Հաղթանակի դեպքում Տեր-Սահակյանը կարող է լրջորեն հավակնել աշխարհի չեմպիոնի տիտղոսին։ Այնպես որ ավարտական 2 տուրերի արդյունքները շատ կարեւոր են առաջնության պարգեւների վերջնական բաշխման համար։

Տղամարդկանց մրցաշարի մեր մյուս մասնակից Վահե Բաղդասարյանը վաղուց կորցրել է մրցանակակիր դառնալու հնարավորությունը։ 11-րդ տուրում նա ոչ-ոքի խաղաց Ռոբերտո Կառնեյրոյի հետ։ Վահեն 5 միավորով 68-րդ տեղում է։

Կանանց մրցաշարում Մարիա Գեւորգյանը 7 միավորով 14-րդ տեղում է։ Նա հաղթեց ռուսաստանցի Աննա Ստյաժկինային։ Մրցաշարային աղյուսակը 8,5 միավորով գլխավորում է ռուսաստանցի Ալեքսանդրա Գորյաչկինան, որը հաղթեց Դեյսի Կորիին։ Նա շրջանցեց ռումինուհի Իրինա Բուլմագային, որը պարտվեց հնդիկ Ռութ Պադմինիին։ Բուլմագան եւ Ժանսայա Աբդումալիկը 8 միավորով հետապնդում են առաջատարին։

# Ֆաթիհ Թերիմը պաշտոնանկ արվեց

Թուրքական «Գալաթասարայի» գլխավոր մարզիչ Ֆաթիհ Թերիմը պաշտոնանկ է արվել։ Հիշեցնենք, որ օրեր առաջ «Գալաթասարայը» սեփական հարկի տակ չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի մեկնարկային խաղում 1-6 հաշվով ջախջախիչ պարտություն էր կրել Մադրիդի «Ռեալից»։

Թերիմը ժամանակին 11 տարի հանդես է եկել «Գալաթասարայում»՝ անցկացնելով 327 խաղ։ Որպես մարզիչ նա 3 անգամ է գլխավորել հարազատ ակումբը։ Նրա օրոք «Գալաթասարայը» երկրի առաջնություններում հաջողության է հասել՝ նվաճելով չեմպիոնի տիտղոսը, իսկ 2000-ին դարձել է ՈւԵՖԱ-ի գավաթակիր։

Ըստ թուրքական լրատվամիջոցների, ակումբի տնօրենների խորհուրդը որոշել է աշխատանքից ազատել Թերիմին այն բանից հետո, երբ վերջինս հրաժարվել է եւս 2 տարով երկարաձգել պայմանագիրը։ Սակայն ամեն դեպքում նրա պաշտոնանկությունը պայմանավորված է թիմի ցածր արդյունքներով։ Թուրքիայի առաջնության 4 տուրից հետո «Գալաթասարայը» 6 միավորով 10-րդ տեղում է։ Էլ չենք խոսում «Ռեալից» կրած ջախջախիչ պարտության մասին։

Լրատվամիջոցների տեղեկացմամբ, «Գալաթասարայի» նոր գլխավոր մարզչի պաշտոնի հիմնական թեկնածուն իտալացի մասնագետ Ռոբերտո Մանչինին է, որը հայտնի է «Մանչեսթր Սիթիում» իր արդյունավետ աշխատանքով։ Նրա գլխավորությամբ անգլիական ակումբն իր պատմության մեջ հասավ լավագույն արդյունքին՝ նվաճելով Անգլիայի չեմպիոնի տիտղոսը։ Սակայն հետագայում նա թիմից հեռացվեց։

Իսկ ահա De Telegraaf-ի տեղեկություններով, «Գալաթասարայը» հնարավոր է, որ գլխավորի հոլանդացի մարզիչ Դիկ Ադվոկատը, որն արդեն բանակցում է ակումբի ներկայացուցիչների հետ։ 65-ամյա մասնագետի մարզած վերջին թիմը հոլանդական «Էյնդհովենն» էր։

# Արոնյանը կմասնակցի «Մեծ սաղավարտի» մրցաշարին

Լեւոն Արոնյանը կմասնակցի հոկտեմբերի 7-14-ը իսպանական Բիլբաո քաղաքում կայանալիք շախմատի «Մեծ սաղավարտ» մրցանակի խաղարկության եզրափակիչ փուլին։ Քանի որ աշխարհի ներկայիս չեմպիոն Վիշվանաթան Անանդն ու Մագնուս Կառլսենը նախապատրաստվում են շախմատային թագի համար կայանալիք մրցախաղին, ուստի հրաժարվել են «Մեծ սաղավարտի» մրցաշարին մասնակցելուց։ Այդ պատճառով որոշվել է 4 շախմատիստների մասնակցությամբ 2 շրջանով մրցաշարն անցկացնել։ Արոնյանը Բիլբաոյում կմրցի ադրբեջանցի Շահրիյար Մամեդյարովի, ֆրանսիացի Մաքսիմ Վաշիե-Լագրավի ու անգլիացի Մայքլ Ադամսի հետ։

# Դանիելյանը տոնեց առաջին հաղթանակը

Տաշքենդում ընթացող շախմատի կանանց Գրան պրիի խաղարկության 7-րդ տուրում Էլինա Դանիելյանը վերջապես ճաշակեց հաղթանակի բերկրանքը՝ պարտության մատնելով Չժան Սյուեին։ Այդ հաղթանակի շնորհիվ Էլինան վաստակեց 2,5 միավոր եւ տեղափոխվեց 10-րդ հորիզոնական։

7-րդ տուրն անվանեց մրցաշարի միանձնյա առաջատարին։ Հաղթելով Նաֆիսա Մումինովային, Համպի Կոներուն 5,5 միավորով գլխավորեց աղյուսակը։ 5-ական միավորով նրան հետապնդում են Կատերինա Լահնոն եւ Հարիկա Դրոնավալին։ Նրանց մրցավեճն ավարտվեց ոչ-ոքի։ 4-ական միավոր ունեն Բելա Խոթենաշվիլին եւ Ցզյույ Վենցզյունը։ Նրանց մրցավեճում հաղթեց չինացի շախմատիստուհին։ Օլգա Գիրյան պարտության մատնեց Գուլիսխան Նախբաեւային, իսկ Ստեֆանովա-Կոստենյուկ մրցախաղն ավարտվեց ոչ-ոքի։

8-րդ տուրում Էլինա Դանիելյանը սպիտակներով կխաղա Բելա Խոթենաշվիլու հետ։

# Աբրահամը ռինգ դուրս կգա հոկտեմբերին



Արթուր Աբրահամի հաջորդ մենամարտը նախատեսված է հոկտեմբերի 26-ին Գերմանիայի Օլդենբուրգ քաղաքում։ Մրցակիցն առայժմ հայտնի չէ։ Արթուրի մենեջերները ներկայումս բանակցում են 3 հնարավոր մրցակիցների հետ, որոնցից մեկն էլ ռինգ դուրս կգա հայ բռնցքամարտիկի հետ մենամարտում։

Օգոստոսի 24-ին հաղթելով նամիբիացի Վիլբերֆորս Շիհեպոյին, Արթուրը հնարավորություն ստացավ 3-րդ անգամ մենամարտելու Ռոբերտ Շտիգլիցի հետ։ Սակայն նրա հետ մենամարտը տեղի կունենա հաջորդ տարի։

# 8-րդ տուրի հանդիպումները հետաձգվել են

Հոկտեմբերի 11-ին Բուլղարիայի եւ 15-ին Իտալիայի հավաքականների հետ կայանալիք ընտրական մրցախաղերին պատշաճ ձեւով նախապատրաստվելու նպատակով բարձրագույն խմբի առաջնության 8-րդ տուրի հանդիպումները հետաձգվել են։ Այդ խաղերը նախատեսված էին հոկտեմբերի 5-ին եւ 6-ին։

7-րդ տուրի «Գանձասար»-«Ուլիս» հանդիպումը սեպտեմբերի 29-ի փոխարեն կկայանա 2 օր շուտ։ Փոփոխվել են նաեւ առաջնության հանդիպումների անցկացման ժամերը։ Սեպտեմբերի 28-ից խաղերը կսկսվեն ժամը 15-ին, բացառությամբ «Հանրապետական», «Հրազդան» եւ ֆուտբոլի ակադեմիայի մարզադաշտերում անցկացվելիք հանդիպումների, որոնց սկիզբը ժամը 18-ին է։

# Մեսին հավասարվեց Ռաուլին

Սան Սեբաստիանի «Ռեալ Սոսյեդադի» դարպասը Լիոնել Մեսիի խփած գոլը 323-րդն էր «Բարսելոնի» կազմում։ Մեսին խփած գոլերի քանակով հավասարվեց Ռաուլին, որը նույնքան անգամ աչքի էր ընկել «Ռեալում» հանդես գալիս։ Այժմ Մեսին եւ Ռաուլը 2-3-րդ տեղերն են բաժանում միեւնույն թիմի կազմում խփած գոլերի քանակով։ Իսկ ռեկորդակիրը իսպանացի հարձակվող Տելմո Սարան է, որը Բիլբաոյի «Ատլետիկի» կազմում 335 գոլ է խփել։

# Հեռուստատեսային նոր ռեկորդ Մեքսիկայում

Ֆլոյդ Մեյվեզերի եւ Սաուլ Ալվարեսի մենամարտը Մեքսիկայում ռեկորդային հեռուստալսարան է ունեցել։ Այն դիտել է 22,1 մլն հեռուստադիտող, ինչը կազմում է այդ պահին հեռուստացույց դիտողների ընդհանուր թվի 77 տոկոսը։ Իսկ 4,5 ժամ տեւած բռնցքամարտի երեկոյին միջին հաշվով հետեւել են 16,2 մլն հեռուստադիտողներ։

Նշենք, որ գարնանը մեքսիկացի Սաուլ Ալվարեսի եւ Օստին Տրաուտի մենամարտին հետեւել էին 15 մլն հեռուստադիտողներ։

# Ջոկովիչը մտավ ընտրյալների շարքը

Սերբ Նովակ Ջոկովիչը դարձավ 9-րդ թենիսիստը, որին հաջողվել է 100 եւ ավելի շաբաթ գլխավորել թենիսիստների դասակարգման համաշխարհային ցուցակը։ Նա հատեց 100-ի սահմանագիծը։

Այդ ցուցանիշով յուրօրինակ ռեկորդակիրը շվեյցարացի Ռոջեր Ֆեդերերն է, որն ընդհանուր առմամբ 302 շաբաթ եղել է դասակարգման ցուցակի առաջատարը։ Նրան հաջորդում են Փիթ Սամփրասը (286 շաբաթ), Իվան Լենդլը (270), Ջիմի Կոնորսը (268), Ջոն Մաքինրոյը (170), Բյոռն Բորգը (109), Ռաֆայել Նադալը (102) եւ Անդրե Աղասին (101)։

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ՀՀ, ք. Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում տեղի կունենա «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊ ընկերության (այսուհետ՝ կազմակերպիչ) կողմից կազմակերպված ընդհանուր բաց աճուրդը: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի Խումբ» ՓԲԸ-ին օտարման իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը՝ ըստ ներկայացված հերթականության:

1. Տաղավար, ընդ. մակերեսն է՝ 200.9 ք.մ. (արտաքին), տաղավարի եւ սպասարկման համար հողամաս՝ 0.01567 հա: Լոտի գտնվելու վայրի հասցեն է՝ ՀՀ, ք. Երեւան, Շենգավիթ, Բագրատունյաց փող., թիվ 28: Լոտի մեկնարկային գինը՝ 69900000 ՀՀ դրամ:

2. Խանութ, ընդ. մակերեսն է՝ 40.3 ք.մ., հասարակական կառուցապատման հողամաս՝ 0.00462 հա: Լոտի գտնվելու վայրի հասցեն է՝ ՀՀ, Կոտայքի մարզ, Ջրվեժ համայնք, Մելքոնյան փող., թիվ 2/4: Լոտի մեկնարկային գինը՝ 20500000 ՀՀ դրամ:

3. Բնակարան, ընդ. մակերեսն է՝ 54.6 ք.մ.: Լոտի գտնվելու վայրի հասցեն է՝ ՀՀ, ք. Երեւան, Մալաթիա-Սեբաստիա, Անդրանիկի փող., շենք 10/2, բն. 19: Լոտի մեկնարկային գինը՝ 13800000 ՀՀ դրամ:

Գույքերը գրավադրված են: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է մեկնարկային գնի 2%-ի չափով, որը պետք է վճարվի կազմակերպչի դրամարկղ կամ բանկային հաշվին («ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ում 16048053452000 հաշվեհամարին) սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ յուրաքանչյուր աճուրդային փուլին նախորդող աշխատանքային օրվա ժ. 16:00-ն, ինչի կապակցությամբ տրվում է աճուրդի վկայական: Աճուրդի առաջին փուլը դասական եղանակով՝ 14.10.2013թ-ին ժ. 12:00-ին, այնուհետեւ փուլերը՝ 15.10.2013թ.-ին ժ. 12:00-ին եւ հաջորդող աշխատանքային օրերին նույն ժամին հոլանդական եղանակով, յուրաքանչյուր փուլում մեկնարկային գների իջեցումով: Աճուրդի ավարտը՝ 29.12.2013թ.:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում Նախավճարները ենթակա են վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը Եթե աճուրդի կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարները Լոտերը կարող են ուսումնասիրվել սույն ծանուցման հաջորդ օրվանից մինչեւ աճուրդի ավարտի օրվան նախորդող աշխատանքային օրը, ժ. 11:00-ից մինչեւ 17:00-ը՝ վերը նշված հասցեներով: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդի անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (010) 56-31-07 հեռախոսահամարով:

---

Երևանի «Ադամանդ» ապրանքա-հումքային բորսայի հարթակում (հասցե՝ք.Երևան, Ագաթանգեղոսի փ. 6/1, 5-րդ հարկ) 2013թ.-ի հոկտեմբերի 17-ից՝ յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 12.00-ին և այնուհետև մինչև 17.00 իրականացվելու են «Երևանի Ջրամատակարարման Ուղեմաս» ԲԲԸ-ի օգտագործված, անսարք և ոչ լրակազմ տրանսպորտային միջոցների և մեքենա-մեխանիզմների (11 անվանում) հրապարակային սակարկությունները (աճուրդային վաճառքը):

Գույքի ընդհանուր սկզբնական գինը կազմում է 1468000 դրամ:

Գույքը գտնվում է Երևան քաղաքի տարածքում:

Գույքի ամբողջ ցուցակին հնարավոր է ծանոթանալ բորսայում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010)47-49-80; (010)56-31-15 կամ դիմել Բորսա:

---

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ

| h/h | Գույքի անվանումը | Պետհամարանիշը | Թողարկման տարեթիվը | Մեկնարկային գինը (դրամ) |
|---|---|---|---|---|
| 1 | ՄԱԶ 5334 (ԿՍ-3577 Կռունկ) | 087 LS 63 | 1989թ | 1,800,000 |
| 2 | Ֆոլկսվագեն տուարեգ | 100 SL 08 | 2007թ | 10,440,000 |

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք Երևան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ և մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2013թ սհոկտեմբերի 11-ին ժ.16.00-ին , ք. Երևան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2013թ հոկտեմբերի 11-ը, ժամը 14.00-ը:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

---

## ՇՏԱՊ վաճառվում կամ վարձով է տրվում

քարե ավտոտնակ ՀԱԹ Բ-4 թաղ.-ում, առանց միջնորդի Հեռ.՝ 077-06-28-48, 055-06-28-48

---

## Վաճառվում է

ավտոմեքենա «Daewoo Matiz» 2009 թ., փոխանցման տուփը՝ մեխ., շարժիչը՝ 0,8 լ բենզին, վազքը՝ 93000 կմ, CDMP3 մագնիտաֆոն «Clarion», անվադողերը նոր են, մեքենան գտնվում է գերազանց վիճակում: Գինը՝ 4000 $-ին համարժեք դրամ:

Հեռ. (077) 700-710:

---

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ

| h/h | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի օգտագործման նպատակը | Շինության մակերեսը /քմ/ | Մեկնարկային գինը (դրամ) |
|---|---|---|---|---|
| 1 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 1 | Ավտոկայանատեղի | 13.23 | 1,692,000 |
| 2 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 2 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 3 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 3 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 4 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 4 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 5 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 5 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 6 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 6 | Ավտոկայանատեղի | 13.48 | 1,710,000 |
| 7 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 7 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 8 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 8 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 9 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 9 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 10 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 10 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 11 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 11 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 12 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 12 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 13 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 13 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 14 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 14 | Ավտոկայանատեղի | 14.46 | 1,827,000 |
| 15 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 15 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 16 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 16 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 17 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 17 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 18 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 18 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 19 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 19 | Ավտոկայանատեղի | 20.29 | 2,592,000 |
| 20 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 20 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 21 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 21 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 22 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 22 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 23 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 23 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 24 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 24 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |
| 25 | Սիսակյան փողոց 22 շենք, թիվ 25 | Ավտոկայանատեղի | 19.98 | 2,547,000 |

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք Երևան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ և մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2013թ հոկտեմբերի 11-ին ժ.16.00-ին , ք. Երևան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2013թ հոկտեմբերի 11-ը, ժամը 14.00-ը:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

---

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ

| h/h | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի մակերեսը | Գույքի օգտագործման նպատակը | Վարձակալության տրամադրման ժամկետը | Մեկնարկային գինը (վարձավճարի չափը 1 ամսվա համար) |
|---|---|---|---|---|---|
| | *Աճուրդով վարձակալության տրամադրվող գույք* | | | | |
| *1* | *Իսահակյան փողոց h.28, կիսանկուղային հարկ* | *80.53* | *հասարակական* | *50 տարի* | *131000 դրամ* |
| *2* | *Արմենակյան փողոց h.141,2-րդ հարկ* | *7.9* | *հասարակական* | *5 տարի* | *7900 դրամ* |

Աճուրդին կարող են մասնակցել իրավաբանական և ֆիզիկական այն անձիք, ովքեր Երևան համայնքի բյուջեի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ և մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2013թ հոկտեմբերի 11-ին ժամը16-ին , ք. Երևան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2013թ . հոկտեմբերի 11-ը, ժամը14-ը:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

---

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ

| h/h | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի օգտագործման նպատակը | Հողամասի մակերեսը /քմ/ | Շինության մակերեսը /քմ/ | Մեկնարկային գինը /դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Նորաշեն թաղամաս թիվ 4 | անավարտ շինություն | 1008.56 | 801.35 | 11,650,000 |
| 2 | Բաշինջաղյան փողոց 192/6 | կաթսայատուն | 155.92 | 137.98 | 6,300,000 |
| 3 | Կոմիտասի պողոտ 34/5 | կաթսայատուն | 290.22 | 258.82 | 22,100,000 |

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք Երևան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ և մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2013թ հոկտեմբերի 11-ին ժ.16.00-ին , ք. Երևան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2013թ հոկտեմբերի 11-ը, ժամը 14.00-ը:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

---

## Կորել է

ավտոմեքենա Ա/Ձ Գայանե Շեգունցի պետական ռեգիստրի վկայականը 01 Ա 096597, գրանցման համարը 282.08332 (22.02.2006 թ.): ՀՎՀՀ 25269146: Համարել անվավեր:

---

## ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

չեխական «Կարմա» գազի վառարան

Հեռ.՝ 094-48-68-03

---

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 25.9.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: